




Ա Մ Ս Ա Գ Ի Ր


ԱՅԳԱՅԻՆ, ԲԱՆԱԽԻՐԱԿԱՆ, ԳՐԱԳԻՏԱԿԱՆ
ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ



ՀԻՆԳԵՐՐՈՐԴՔ ՏԱՐԻ
ՇՐՋԱՆ ՄԻԱՄԵԼՅ



ՅԵՐՈՒՍԱԼԻՄ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ՅԱԿՈՎԲԵԱՆՑ
1870



ՀԻՆԻԲԵՐՈՐԴ՝ ՏԱԳԻ
ԹԻՒ 6.

Մ. Մ. Ս. Ա. Գ. Ի. Ր.

ՅՈՒՆԻՍ 30.
1870.

Ս. Զ. Գ. Ա. ՅԻՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

ԿՐԾՆԱԿԱՆՔ

ՊԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՒ ԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԻՄԲԵՆՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏՈՐԲԵՐՈՒԹԵԱՆՑ
ԿԱԹՈՒՂԻԿԵ ԵՒ ԵԶՄԱՆԱԿԱՆ ԴԱՒԱՆՈՒԹԵԱՆՑ (*)

ՄԱՏԹԵՈՍԻ ՄԵԼՈՒՆԱՐԱՆԻՆ Ե. ԳԸ
17. ըստ ձևի ահաւատիկ. Մի համարիք
եթէ եկի լուծանել զընդհանրաւ կամ ըն
մարդարէս, ոչ եկի լուծանել, այլ ըն
նուէ. Մի՞նք ապա մեզ մինչեւ անց
ցեն երկիրք և երկիր, յալս մի սրնը
շանտախց մի է ոչ անցցէ յորինացն և
ի մարդարէից, մինչեւ ամենայն և
զիցի:

Հին օրէնքը բոլոր նորին օրինակն
էր. նորն է ճշմարտութիւն, հին օ
րէնքն ստուեր մ'էր, նորը՝ լոյս. հին
օրէնքը իւր ստուերական խորհուրդ

(*) Երաւունսկութիւն, տես թիւ (3):

ներուն համար իշուսաղէմ քաղաքի
և Սղոմոնեան տաճարի պէտք ունէր:
Նոր օրէնքն ալ ըստ սրում լոյս և ոչ
ստուեր, չունի երբեք պէտք Հռովմ
քաղաքի, Պետրոսեան տաճարի, այլ
իւր իշուսաղէմն է ճշմարիտ հաւա
տացեալը, իւր տաճարն է ճշմարիտ
հաւատացելոյ հողին: Ս. Գրոց վե
կայութիւնները կը դնենք ահաւատիկ
յայտնապէս, և ոչ խաբեբայարար:

«Նաեւ Սղոմոն յնեաց նմա տուն,
այլ ոչ եթէ բարձրեալն ի ձեռագործ
տաճարս բնակէ ո՞ր Գրք. է. ԳԸ 48:

«Երաւունսկութիւն, տես թիւ (3):

և զամենայն որ ՚ի նմա, նա երկնից և երկրի է տէր. ոչ ՚ի ձեռագործ տաճարս բնակէ. և ոչ ՚ի ձեռաց մարդկան պաշտի իբրեւ կարօտ իմիք. նա տայ ամենայնի կեանս և շունչ՝ և զամենայն ինչ: Արար ՚ի միջէ արեւնէ զամենայն ազգս մարդկան, բնակել ՚ի վերայ երեսաց ամենայն երկրի. հաստատեալ կարգեալ ժամանակս և սահմանադրութիւնս բնակութեան նոցա՝ խնդրել զԱստուած. Օ, ի թեւեւս զննիցեն զնա և գտանիցեն, նա և ոչ հեռի իսկ է յիւրաքանչիւր ումեքէ ՚ի մէնջ: Օ, ի նովա կեամբ, և շարժիմբ, և եմբ: Վրժ. ԺԵ. ԳԼ. 24-28:

«Այլ գիտէք եթէ տաճար էք Աստուծոյ, և Հոգի Աստուծոյ բնակեալ է ՚ի ձեզ. եթէ որ զտաճար Աստուծոյ ապականէ, ապականեսցէ զնա Աստուած. զի տաճար Աստուծոյ սուրբ է, որ էք դուք: Ա. Կրն. Գ. ԳԼ. 16-17:

«Եթէ ոչ գիտէք, զի մարմինք ձեր տաճար են Հոգւոյն որ է ՚ի ձեզ զոր ունիքն Աստուծոյ. և չէք անձանց տէր, քանզի քնոյ գնեցայք. փառաւոր արարէք զԱստուած ՚ի մարմինս ձեր և յոգիս ձեր: Ա. Կրն. Զ. ԳԼ. 19-20:

«Քանզի գիտեմք, զի եթէ տաճար երկրաւոր շինուածոյս մերոյ քակտեսցի, շինած Աստուծոյ ունիմք, տաճար առանց ձեռագործի յաւիտենական յերկինս: Ա. Կրն. Ե. ԳԼ. 1:

«Ապաքէն դուք տաճար Աստուծոյ կենդանւոյ էք. որպէս ասաց Աստուած թէ բնակեցայց ՚ի նոսա. եւ գնացից ՚ի նոսա, և եղէց նոցա Աստուած, և նոքա եղիցին իմ ժողովաւդք: Ա. Կրն. Զ. 16:

«Այժմ ՚ի ձեռն Յիսուսի Քրիստոսի, դուք որ երբեմն հեռաւորքն

էիք, մերձաւորք եղերուք արեամբն Քրիստոսի. հաշտեցուցէ զերկայն միով մարմնով ընդ Աստուծոյ խաչին իւրով. Ապա այսուհետեւ ոչ էք օտարք և պակասաբար, այլ քաղաքակիցք սրբոց, և ընտանիք Աստուծոյ. շինեալք ՚ի վերայ հիման Առաքելոց և Արդարեից. որոյ է գլուխ անկեանն Յիսուս Քրիստոս. յորում ամենայն շինուածս յօդեալ և պատշաճեալ աճէ ՚ի տաճար սուրբ տէր. յորում և դուք ընդ նմին շինիք ՚ի բնակութիւն Աստուծոյ Հոգւով: Ա. Կրն. Բ. ԳԼ. 13-22:

«Հաւառակորդն հպարտացեալ ՚ի վերայ ամենայնի, որ անուանեալ իցէ Աստուած՝ կամ պաշտօն, մինչեւ նստել նմա ՚ի տաճարին Աստուծոյ և յուցանել զանձն թէ Աստուած իցէ: Ա. Կրն. Բ. ԳԼ. 4:

«Եւ դուք իբրեւ զվէմս կենդանիս շինիք տաճար հոգեւոր, յանարատ քահանայութիւն, մատուցանել զհոգեւորն պատարագս հաճոյ Աստուծոյ ՚ի ձեռն Յիսուսի Քրիստոսի. քանզի կոյ իսկ ՚ի գրի. եթէ ահաւասիկ դնեմ ՚ի Սիօն վէմ ընտիր, գլուխ անկեան պատուական. և որ ՚ի նա հաւատաոյցէ մի ամուլեսցէ: Ա. Կրն. Բ. ԳԼ. 5-6:

«Սա ասն պատրիկ դնեմ ծուներ առ հայր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. զի տայցէ ձեզ ըստ մեծութեան փառաց իւրոց հաստատել զօրութեամբ ՚ի ձեռն Հոգւոյն իւրոյ ՚ի ներքին մարդն, բնակել Քրիստոսի հաւատովք ՚ի սիրտս ձեր. սիրով արմատացեալք և հաստատեալք:»

Այս վկայութիւնները միայն կըլնայ մէջ բերել Հայաստանեաց Եկեղեցին որմբ Ս. Գրոց հոգին են Քրիստոսեայ Եկեղեցի մը Ս. Գրոց

Համաձայնութեամբ ուղղափառ է .
և այն հին կտակարանին համեմատու
ւելով, նոր կտակարանին իսկ և իսկն
ըլլալով, Լէ ոչ թէ Հռովմէականին
պէս Հարց խօսքերու վրայ հիմնուած
Տրիդ. Փլորենա . Ժողովոց և Վաղ-
կեդոնի նախագաւառութիւնները պաշ-
տելով : Հայաստանեայց Եկեղեցին
իւր պէտքը Մարքելոց գրուածքնե-
րէն միշտ հայթայթելու զգուշութիւն
ունեցած է . իսկ Հռովմայեցին ոչ
այնպէս . այլ () գոտիմտոսի գրուածք
ներէն . Հաբեբդի գրուածքներէն
և այլն . որոց եթէ խօսքերը քննուին,
կամ ուղիղ խօսած են, և արդի հը-
ռովմէականներէն թիւր մեկնուած,
և կամ նոյն ինքն հեղինակին բերնէն
սխալ դուրս ելած :

Հայաստանեայցս Ս . Եկեղեցին
կ'ընդունի Մարքելոց խօսքը ոչ իբրեւ
մարդկային խորհրդով բաւած, այլ
նոյն ինքն Հոգւով Սրբով բաւած
ինչպէս Ս . Գիրք կը վկայեն .

«Եթէ սբ սիրէ զիս զբանն իմպա
հեօցէ, և Հայր իմ սիրեացէ զնա . և
առ նա եկեացուք, և օթելանս առ
նմա արասցուք : Լէ որ ոչն սիրէ զիս
զբանս իմ ոչ պահէ, և զբանն իմ զար-
բէք' ոչ է իմ . այլ Հօրն' որ առա-
քեացն զիս : Օյայս խօսեցայ բնդ ձեզ
մինչ առ ձեզս եմ . իսկ մխիթարին
Հոգին սուրբ զոր առաքեացէ Հայր
յանուն իմ, նա ուսուսցէ ձեզ զա-
մենայն, որ ինչ ասացի ձեզ . և յի-
շեցուսցէ ձեզ : Յի . ԺԴ . ԳԼ . 23
-26 » :

«Լէ առջիք զօրութիւն ի հասա-
նել Հոգւոյն Սրբոյ ի վերայ ձեր . և
եղիջիք ինձ վկայք յարուստղէմ և
յամենայն Հրէաստանի և ի Սամարիա
և մինչեւ ի ծագս երկրի ու Ղարծ . Ա
ԳԼ . 8 :

«Լէ եղև յանկարծակի հնչուն

յերկնից եկեալ իբրեւ սաստիկ հող-
մոյ . և ելից զամենայն տունն յորում
նստէին . և երեւեցան նոցա բաժա-
նեալ լեզուք իբրեւ ի հրոյ, և նստաւ
իւրաքանչիւր ի վերայ նոցա . և լը-
ցան ամենեքեան Հոգւով Սրբով, և
սկսան խօսել յայլ և այլ լեզուս, որպէս
և Հոգին տայր բարբառել նոցա : Ղարծ .
Բ . ԳԼ . 2-4 » :

«Սերտոս լեալ Հոգւով Սրբով
ասէ ցնոսա : Ղարծ . Դ . ԳԼ . 8 » :

«Ես տաց ձեզ բերան և իմաստու-
թիւն, որում ոչ կարիցեն կալ հա-
կառակ կամ տալ պատասխանի ամե-
մենայն հակառակորդք ձեր : Ղարծ .
ԻԱ . ԳԼ . 16 » :

Սեղն խօսուած խօսքերու մէջ Տը-
րիդ . Ժողովոյ խօսքերէն վկայութիւն
բերելու հարկ չկայ, մեզ համար մի
և նոյն հնչումն են թէ պապերուն
արքայոց Կոմմայ լի իրիւթիւն խօսքը, և
թէ այդ Ժողովներու որոշածը Սեղն
ալ ունինք Հայրեր որոնք ուղղակի
Ս . Գիրքէն կը խօսին և ոչ հռովմէա-
կան Հարց պէս () գոտ-
իմտոսէն, և այլն . սակայն մենք այս
տեսակ վեճերու մէջ դարձեալ անոնց
ըսածք չեմք առնել ձեռք բնիս, այլ
Ս . Գիրքը կը բերեմք մէջ տեղ ան-
գծելի վահան անոնց նետերուն դէմ
և բացէ ի բաց խայտառակիչ անոնց
ամէն ստու թեանցը :

Հռովմայ Եկեղեցին կաթուղիկէ
ըլլալուն վկայութիւն միայն Տրիդ . և
Փլորենա . Ժողովոց խօսքերը մէջ բե-
րել կ'ուզէ, զորս մենք չենք ճանաչել .
Կիւրդի Լըուսաղեմացոյ կոչումն բն-
ծայութեանը ձեռք կ'առնուէ կոչմամբ
և ոչ վկայութիւնը գնելով . Կիւրդի
խօսքերն ըստ Վեոտարանի բոլոր ու-
ղիղ ըլլալով կ'ընդունի զայն նաև Հա-
յաստանեայցս Եկեղեցին . սակայն
մենք Հայքս կը կարդամք Կիւրդի գը-

բուածքը, և իւր բաժնի ու գիտցած ընդհանրական Նկեղեցին ալ մեր գիտ. ցածին համաձայն ամեն Վրիստոնեայ Նկեղեցեաց միութիւնը կը գտնամք. ու բուն մէջ արդէն դու չափելիք խօսքեր կան բառածնեկը բացայայտ և մեկ նողական ըլլալով. և Հռովմի անունն ամենեւին չկայ:

Սատթէոսի Նետարանի Ե. Գլ. 17 համարն ու կիւրղի կ'ըլ. 178. որ. պէս թէ հաստատելին Հռովմայ Նկեղեցւոյն կաթուղիկէ Նկեղեցին ըլլալը. և այնպէս մէջ կը բերէ տարբերութեանց հաւաքիչ վերապաշտեւելին. չարաչար փաստի մը զօրութիւնը ու միայն շատ հասկցողներու, այլ և շատ մը չհասկացողներու ալ ծաղրելի է. և փաստ մը, որ փաստաբանը կը խայտառակէ:

Վերապաշտուելին կ'ըսէ որ բերուած վկայութեանց հակառակ Հայերը կը գանգատին ու կ'ըսեն «մեր Հայքը սա լեռան տակ սկսած Սասնայ ստորոտն երկրպագութիւն ըրին, բայց դուք կաթուղիկեայք կ'ըսէք թէ, միայն կաթուղիկէ Հռովմական Նկեղեցւոյ հնազանդութեան մէջ կրնայ Մատուցոյ ընդունելի երկրպագութիւն ըլլալ»:

Սակայն ոչ եթէ այսպէս կ'ըսեն Հայերը. թէ Ղլտո Սասնայ ստորոտը կ'երկրպագեն իրենց հաղցը պէս և չեն երկրպագէր կաթուղիկէ Հռովմական Նկեղեցւոյ հնազանդութեան մէջ, այլ թէ ոչ Հռովմ և ոչ Հայաստանի իսկ Սասնայ ստորոտը, այլ Հոգւով և ճշմարտութեամբ աւմէն ուրեք Մատուցոյ կ'երկրպագեն, և Մատուց է որ կ'ընդունի անոնց երկրպագութիւնը. Հայերը Պապին չեն երկրպագեր. որ Պապը իւր կարծած իշխանութեամբ մերթէ և չինդունի ասոնց ըրած երկրպագութիւն:

Վիցուք թէ հոմայն աշխարհ Մերեւելք և արեւմուտք Հռովմականաց վարմը բռնուելով կամաւ կամ ակամայ կուրութիւն ալ խոտաւանին թէ Պապն անսխալ է, Պապը կաթուղիկէ Նկեղեցւոյ գլուխն է, մենք դարձեալ բուն Հայ ոգւով, Հայաստանեայց Նկեղեցւոյ կարգացած Նետարանին, (զոր ի Վրիստոնէ առին ամեն ազգ հաւատարագէս) վկայութեանց զօրութեամբը, և մեր խելքի կշիռովը գիտենք և կը ճանաչենք թէ Պապը մարդ է եւ մարդու տղայ. Պապը սխալական է, Պապը կը սխալի կը մեղանչէ ալ, և թէ Պապը շատ կը սխալի, և շատ կը մեղանչէ, և թէ Պապը շատ սխալած և շատ մեղանչած է, եթէ քննութեամբ ճշմարիտ ըլլալը վկայուած պատմութեանց արձանագրութիւններն հնութիւնները կըրնան աւանդել ապագային:

Եւ շարունակէ դարձեալ վերապաշտուելին, «Ի՞նչ ունի աս եկեղեցին, կ'ըսեն Հայերը, որն որ Նշմլեւանական Նկեղեցւոյ պակսի, քահանայութիւն, խորհուրդ, վարդապետութիւն, հոս յոյս, անդին փրկութիւն երկուքին մէջն ալ նոյն է: Սակայն քանի մը նորամուտ անտեղութիւններ են, որոնք Հռովմական Նկեղեցւոյ բարոյական յատուկ կը մնան»:

Եւ, ժողովուրդ մը Հայն է, ժողովուրդ մ'ալ Հռովմայեցին. Նկեղեցի մը կը կազմէ Հայոց ժողովուրդը, եկեղեցի մ'ալ կը կազմէ Հռովմայեցի ժողովուրդը, և այս մասնաւոր ամեն Վրիստոնեայ եկեղեցեաց միութիւնն է, որ կաթուղիկէ Նկեղեցի կ'ըսուի, որոյ գլուխ միակ ինքն Վրիստոնէ (1), Հռովմայեցւոյ միայն

(1) «Զի մի յայտմ հետէ իցեմք տղայք իսկ վիպիք և տոտանապք յամենայն հոգմց վարդապետութեան խորհուրդեամբ մարդկան խորաման:

կը մնան այն անտեղութիւնները զոր նոր ի նորոյ կը հանեն փառամուրէ թեան կիրքերէ դողեալ, ներսողութեան կոնգակներ ջրուել, աշխարհի ամեն կողմն ունենալ Պապին անսխալութիւն համազօղ վարդապետներ, ուրիշ Քրիստոնեայ ազգաց հերետիկոս ըսել : Սարգոյ Աստուծոյ ընելիք երկրպագութիւնն իրեն ծոցը բանտարկել, խօսքով թէ « Արտաքոյ Հոռովմայ չի փրկութիւն » : Այս տեսակ պարագայներու մէջ կը տարբերիմք Հոռովմէն յաւիտեան, փոսն զի մեր իշկեղեցւոյն մէջ գործելի մեղաց թողութիւն երբեք լրաց չիմք, և չգործուած մեղաց համար թողութեան պէտք չըլլալը քաջ գիտեմք : Եւ որք մեղաց ինչպէս թողութիւն պիտի ընէ մէկը, նոյն ինքն Քրիստոսի ըրած թողութիւններուն կարգը չիայ այդ տեսակ թողութիւն մը (1) :

Կաթեմբի ի խորէւթիւն մեղսութեան, այլ ճշմարտեալք սիրով առնուցուք ի նա զամենայն որ է գաւթ Բրիտանո Եփէս Դ. ԳԼ. 14—15 :

« Ես (Բրիտանո) զլուս մարմնոյ Եփէղեցւոյ ԿԷ. Ը. 18 » :

« Այր է զլուս կնոջ, որպէս և Բրիտանո զլուս է Եփէղեցւոյ Եփէս Ե. ԳԼ. 25 » :

(1) Զգալ կաշէք անձանց, Եփէ մեղիցե կղբայրն քո, աստուած նմա, և Եփէ ապաշխարիցե թող նմա, և Եփէ Եփէն անգամ մեղիցե քեզ, և Եփէն անգամ գործիք ի քեզ և առիցե ապաշխարեմք թողեալ նմա ԴԷ. Ժ. ԳԼ. 5—4 » :

« Խորձեալ ի կենն կողմն ասէ Պիլմոնի, տեսանա զայս կին, մօր ի տուն քո, ջուր օտից լմաց ոչ ետուք, իսկ աս արտասուք իւրովք Եփաց զտարս իմ, . . . Վասն որոյ թողեալ լիցին ամա մեղք իւր բազումք, զի յոյժ սիրեայ . . . Եւ սոս ցնա (ցկինն) թողեալ լիցին քեզ մեղք քո ԴԷ. Ժ. 44. 48 » :

« Գալին առ նա և բերելին անգամայն ծի բարձեալ ի չորից, իրբեւ ոչ կարելին մերձենալ առ նա յամբոսէ անտի, քակեցին զյարկն ուր էր Զիտու և բացեալ զառաստաղն իջուցին զմահիճան յորում կայր անգամայն, և տեսեալ Զիտուսի զհաւատս նոցա, ասէ ցանգամայն, որդեակ, թողեալ լիցին քեզ մեղք քո ԵԷ. Ժ. 5—3 » :

« Զի խորձիք զայդ ի սիրտս ձեր, զմեջ գիւրին

« Սեր տարածայնութիւնները, քանի մը անտեղութեանց ամփոփելով, գործքերն իս լմացուցած չենք ըլլար կ'ըսէ վերապատուելին, փասն զի մեր տարածայնութիւնները մինակ այն « անտեղութիւնները » չեն, և աս անտեղութիւնն ըսուածները կարծուածէն շատ աւելի խոշոր վիհեր են, որոնց վրայէն ասանկ թեթեւ չենք կրնար ցառքել, Ասոնցմէ միայն Դիւ կրնայ մեր յաւիտենական միջնորմն ըլլալ » :

Այս Հայաստանեայց Եփէղեցւոյ ըսած անտեղութեանց մէջ կան այն պիտի պարագայներ ալ, որ խորունկ վիհեր են, զոր անցած են Հայերն անտեղութիւն ըսելով : Սակայն վերա-

է, ասել ցանգամայն ծի, թողեալ լիցին քեզ մեղք քո, Եփէ ասել արի առ զմահիճա քո, և երթ ի տուն քո : Այլ զի գիտալիք, Եփէ իշխանութիւն ունի Բրգի մարդայ ի վերայ երկրի թողութեան զմեզ ասէ ցանգամայն ծի, քեզ ասեմք, արի առ զմահիճա քո, և երթ ի տուն քո : Եւ յարեալ, և վաղվաղակի առ եալ զմահիճան, և առաջի ամեն, ցուն, մշտեւ զարմանալ ամենեցուն և փառաւոր ասեմք զԱստուած և ասել, Եփէ սոյալիս ինչ երբեք ոչ տեսաք ու ՄԷ. Բ. ԳԼ. 8—12 :

« Բրգեալ առաքեաց զիս Հայր, և ես առաքեմ զԶեղ, և զայս իրբեւ ասաց, փռեաց ի նոսա և ասէ, առէք հոգի ուրբ, Եփէ ումեք թողուցուք զմեզ, թողեալ լիցին նոցա, Եփէ զուրաք ունիցիք կաթեալ լիցին : ԶԷ. Բ. ԳԼ. 20—25 » :

« Եկն յամենայն կողմն յորդանանա քար զել մկրտութիւն ապաշխարութեան ի թողութիւն մեղաց ու ԴԷ. Ժ. ԳԼ. 5 » :

« Բանդի ամենեկին մեղան . . . և արդարանան ձրի նորին շնորհք ի ձեռն փրկութեանն որ ի Քրիստոս Զիտուս, զոր յառաջն կը Աստուած քաւութիւն ի ձեռն հաւատոյն արեամբ նորա ի հանդէս արդարութեան նորա փասն թողութեան յառաջացին մեղացն գործելոյ ու ՀԷ. Ժ. ԳԼ. 25—28 » :

« Եւ լուեալ զայս (զքարող Պետրոսի) զՀայցան ի սիրտս իւրեանց և ասեն ցփեարտս և ցալ առաքեալն, զինչ գործեոցուք արք և զորարք, ասէ ցնոսա Պետրոս, ապաշխարեցէք և մկրտեցիք իւրաքանչիւր որ ի ձեռն յանուն տառն Զիտուսի Քրիստոսի ի թողութիւն մեղաց, և բնկալիք զուեալս Հոգւոյն որոյ, զի ձեզ են աւետարտ և ոչոքայ ձերոց » : Բ. ԳԼ. 57—59 :

պատուելին որ կ'ուզէ այս անտեղու-
թեանց խոշոր վիհեր ըլլալն հաստա-
տել, միանգամայն չհաստատուեր ալ,
ըստ որում երկար կը խօսի հազար-
գութեան բաժակի անապակ կամ
չրախառն ըլլալուն վրայ եւ կ'ուզէ
այսպիսի պարագայ մը Հրէից կար-
ծեցեալ աւանդութիւններէն հա-
տատելով յաւիթեան միջնորդն ընել:
Սինգդեռ Հռովմայ եկեղեցին Հա-
ղորդութեան խորհուրդը բոլորովին
խանգարած է Ս. Բեատաբանին դէմ
ընդդէմ հակառակ խորհուրդը զա-
նալով ժողովուրդեան, Վաթրքեան
վերապատուելին ելեր օտար ու մանր
պարագայներէ Հայոց և Հռովմայե-
ցւոց միջնորդն հանել կ'ուզէ:

Փոխանակ ասդին անդին ինչպու-
թեմէ մեղհարցանէիք անգամ մը, մենք
դիւրաւ կը գտնէինք Ձեզ մեր ու-
ձեր մէջ եղած միջնորդները, ինչպէս
է ահաւասիկ:

Հայերը ընդհանրական Եկեղեց-
ւոյ գլուխ նոյն ինքն զՎրիստոս կ'ըն-
դունին:

Հռովմայեցիները ընդհանրական
Եկեղեցւոյ գլուխ զՊապ կ'ընդունին:

Հայերը բոլոր ժողովուրդն հա-
ղորդութեան արժանաւոր կը սեպեն
և կը հաղորդեն:

Հռովմայեցիները ժողովուրդն ա-
նարժան սեպելով հաղորդութեան,
ժողովուրդն առանց խորհրդոյն հա-
ղորդելու կը թողուն, որ միայն սե-
ղանոյն վրայ դրուած հացը ճաշակէ:

Հայերը այնպիսի անարդ ու ան-
պատեհ ինքնաշարժութիւններ չունին
որ իրենց սովորեցնէ նորատեսակ մը
կրօնութիւններ, յիշին որովայնի
սաղմը կամ դեռ չճնաժ մանուկը
քրիստոնեայ ընել և քրիստոնեութե-
մէջ մեռցնել, Հռովմայեցիներն ու-
նին անհամար ինքնաշարժութիւններ,

որ աւելի մեղաբանութիւններ կը
պարունակեն քան թէ առաւանդա-
բանութիւններ, որ իրենց նորանոր
գործիքներով (չիրիկոյնելով) դեռ
չճնաժ մանկանց միջոցութիւն ընել
կը սովորեցնէ, խառնովանաորդիկն չը-
գիտցած մեղաց տեսակներն ալ կը
դասախօսէ:

Հաւատնք են մեր ու հռովմայե-
ցւոյ տարբերութիւնները, մէկ մ'ալ
որ Հռովմայեցիք աւելորդապաշտո-
թեամբ այլեւայլ նորաստեղծ տիեզե-
րական ժողովներ կ'ընդունին, որոց
ամենուն ալ նպատակը թերեւս խա-
բէութիւններ ըլլան եւ թէ քննութիւն,
և Պապին անօրինակութեան սկզբունքն
հրատարակելու համար թերեւս ժո-
ղովուած, առանց խօսքերն ու պատ-
գամները մտիկ կ'ընեն Հռովմայեցիք,
և ո՛ր է իրենց արդիւրդը թող հաղոր-
մէկ տիեզերական ժողով ճանաչեն:
Բանադատութեամբ Երեւելքէն եր-
կու կամ երեք Եպիսկոպոս տանելով
և անոնց ալ Պապին կամ կարգ մը
կարդինալաց կամօյն համաձայն ըս-
տիպմամբ և սպառնալեօք այ՛ ստու-
րագրել տալով, տիեզերական ժողով
և հոգեխօսութիւն չըլլար:

Ի սկզբանէ և այսր Հայերն երեք
տիեզերական ժողով միայն կ'ընդու-
նին անոնցմէ դուրս ժողովոց անուն
չեն ճանաչեր:

Եսնցմէ կը գանգատի վերապա-
տուելին թէ Հռովմեական ճեղղ
Երեւելեան քրիստոնէից մէջ չկայ
քրիստոնեայ ազգ մը որ Հայոց չափ
մօտ ըլլայ Հռովմեականաց ծիսի կող-
մանէ: Եւ դժուարաւ կը գտնուի
կ'ըսէ քրիստոնեայ հասարակութիւն
մը որ անչափ հեռի ըլլայ Հռովմեա-
կան եկեղեցիէն հաւատոյն կամ վաղ-
դապետութեանը կողմանէ որչափ
Հայոց հասարակութիւնը:

Ասոր ալ փաստ կը բերէ արդի
Յունաց և Հայոց եկեղեցիները, թէ
յունաց եկեղեցին բողոքովին կը դա-
տապարտէ Հռովմայ հաւատքն ալ,
և Հայոց եկեղեցին անոր հաւատոցը
յարգութիւն եւ պատկառանք կը
պահէ :

Յունաց կղերը կ'ըսէ . իրեն կը
պահէ իւր ժողովուրդը Հռովմէական
եկեղեցւոյ վարդապետութիւնը մո-
լորակն է ըսելով : Հայոց կղերն ալ
յարգութիւն կը պահէ մեր ու հը-
ռովմէական եկեղեցւոյ վարդապե-
տութիւնը նոյն է ըսելով :

Սակայն ոչ այնպէս, Հայ կղերը
իւր ժողովուրդն իրեն կը պահէ իւր
հաւատոյն եւ վարդապետութեան
ուղղութիւնը աւետարանի վկայու-
թեամբ հաստատելով : Եւ հռովմա-
յեցւոյն դաւանութեան մոլորական
ըլլալը համոզելու հարկ չմնար այն ա-
տեն . ըստ որում նա արդէն գիտէ
մի և նոյն Քրիստոսի վրայ ուղիղ հա-
ւատք մը . և երբ իրենինէն օտար
հռովմայեցւոյն հաւատքն ալ կը տես-
նէ, իսկոյն կ'սկսի դատել : Եւ ո-
րովհետեւ Հայոց դաւանութիւնն
Աստուծոյ վրայ միայն կայացած է, և
հռովմայեցւոցը Աստուծոյ միանգա-
ւայն և Պապին, ուստի 'ի հարկէն է
որ խորհող մը ասոնց մէջ եղած խո-
րունկ վիճերը տեսնէ, և չկարենայ
անոնց վրայէն ցատկել :

(Շարունակելէ) :

Սկզբունք . — Կարճեաց ազատութիւն :
— Ճշմարիտ բանադատութիւնը : — Ազ-
գային դպրութեան վրայ երկու խօսք :
— Երկրագործութեան հանրացումը : —
Հարստահարութիւնը :

— Լնցեալ ամսուան բանասիրակա-
նին վերջին կտորը որ մուտնուած էր,
կը դնեմք 'ի ներքոյ :

Ով որ զգացում ունի, թող այս
արդար բողոքներուն հաւասարիմ
թարգման ըլլայ, և ով որ գրիչ ունի
թող իրրեւ սուր՝ այն անողոր հարբս-
տահարիչներուն դէմ գործածէ :

Ուր որ չկայ այս զգացումը, հոն
պատիւը ստուեր մ'է, իրաւունքը
բառ մը, օրէնքը՝ խաղալիք և իշխա-
նութիւնը՝ երեւոյթ մ'է :

Հայք՝ իրենց ինչքը, պատիւը
և կեանքը երաշխաւորած Մրեւելեան
Տաճկաստանի ժողովուրդն են :

Երբ ժողովուրդ մը՝ ներկայ քա-
ղաքակրթութե՛ դէմ այսօրինակ գոր-
ծածուած ոճիրներուն լռելեայն կը
հանդուրժէ. և ազդ չտար պէտք ե-
ղած տեղը, իրեն խղճի և ազգ . շա-
հերը պաշտպանելու համար համա-
զօր աղատութիւն, երաշխաւորու-
թիւն և ապահովութիւն պարգեւող
կառավարութեան դէմ մեղանշած կը
սեպուի :

Ե. Յ. Այվազեան :

Լնցեալ ամսոյ Սիօնի մէջ յիշուած
Յիսուսեան կրօնաւորը, քաղաքիս մէջ
ջուր հանելու մասին . Առ կառավա-
րիչ Վսեմ. Քեամիլ Փաշային տուած
նամակին օրինակը, զոր Վաղղիւրէնէ
Թարգմանելով կը դնեմք մեր խոստ-
ման համեմատ :

ՕՐԻՆԱԿ ԴՆԱՄԱԿԻՆ

ԳՊՐԶ ԼԵՖԻՕՇԱՏԻ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ

ՊԻՐ ՍԷՆԱԼԻԻ ԻՄԱՏ ՎԼԻ ՍԵՍԵՐԻՖԻՆԵՆ

1869	ՎԱՐԻՏԱԹ	Ղ- .	Փր	Ղ- .	Փր
Յ-Ն. 1	Իւչ տէյիրմէնէրին պիր սէնէլք իճարլէրի	32300			
"	Վանքըն սիւտ իճարէսի	1300			
"	Քուքուլը սույունտան ալնիան իրաս	800			
"	Սամըն իչէրլէրի պահճէ իճարընտան	325			
"	Վանքըն զահրէ սաթըլընտան	3125			
				37850	
"	Վագըֆ հանէ իճարը Մարաիրոս Յակըբեանտան	570			
"	Վանքըն իւչ պահճալէրինին իճարլէրի	1100			
"	Թեքէ սաթըլը	1367			
"	Սէնէյի սապըգ զիմէմաթլէրտէն	16685			
"	Ինէք վէ հարնըպ սաթըլը	160			
				19882	
"	Իքի իւզ էլլի քոյուն եսղը սաթըլընտան	1600			
"	Ղըր Սիմեօն հանէսի քիրասընտան	703			
"	Վանքըն պալմօմու սաթըլը	120			
"	Սէնէյի սապըգ սանորըք մէվճուտու	20046			
				22469	
				80201	
	Եւալընը սէքսէն պին իքի իւզ պիր զուրուշ տուր				

վսնու ց Միամեայ արդեանց և ծախուց ցուցակն է, 1869 ամին:

ԵԿԵՂԵՑԻ ԻԼԻ Ս. ՄԱԿԱՐ ՎԱՆՔԸՆ

ԻՆՍՏԻՏՈՒՏ ԻՄ 1869 ՄԱՆԱԿԱՆՈՒՄ

1869	Մ Է Ս Ա Ր Ի Ֆ Ա Թ	Ղ - .	Փր	Ղ - .	Փր
Յ.ն. 1	Տէյիրմէնլէրին թամիրլէրինէ օլան մէսարուֆ	6456			
"	Լիկեղեցիներն քաւիթ մէսարիֆի թամիրլինէ	971			
"	Վանքըն ազնամ բուսուսու	775			
"	Պիր սէնէտէ քահանայարա ֆաթիրլէրէ վէ վարթապետէ վէրիլէն մահլէյէ	15160			
"	Վանքըն էսնիյէ թամիրլէրինէ մէսարիֆ	3712		27074	
"	Բէրէքէնտէ մէսարիֆ Լիկեղեցիյէ	3271			
"	Տէյիրմէնճիլէրտէ քալան զիմէմ	9875			
"	Վանքըլը բոսայ վէ տէյիրմէնճիլէրտէ Սէնէյի սապըգտան քալան զիմէմաթ	18345			
"	Քօնդըաթօլար իլին վէրիլէն	672			
"	Սանարգ մէվճուտու	20944		53107	
	Եւալընըզ սէքսէն պին իքի եիւզ պիր զուրուշ տուր			80201	

ԱԶՆԻԻ ՏԷՐ

Այն հարցման պատասխանելու համար, զոր Չերդ ազնուութիւնը՝ իրեն տեսչութեան յանձնուած ժողովրդոց բարօրութեան փափաքանօք առ իս ուղղեց, թէ « Բնչպէս հայ թայթեւու է ջուր երուսաղէմ քաղաքին համար » . պարտաւորեցայ կատարեալ քննութիւն մը ընել Հրէաստանի երկրագրական կազմութեանց որպիսութեան եւ բնութեան վրայ աղբերաց նկատմամբ . նախ՝ ընդհանուրն ի միասին, ապա մանրամասնաբար . յորաքանական քննութեանց մէջ դեռ այսպիսի դժուարութեանց բնաւ երբեք հանդիպած չէի նոյն իսկ Ափրիկէի Սահարային (Քաղաքի) մէջ . Ինչ եւ իցէ, այս քննութիւնք լիացան, որք կը ներեն մեզ՝ անկից քաղած յաջող եզրակացութիւնները Չերդ ազնուութեան հաղորդելու պատիւն ունենալ :

Երուսաղէմ քաղաքը՝ կրնայ ջուր ունենալ երկու պայմանաւ . կամ հորերու միջոցաւ որք դժբաղդաբար խորունկ են եւ երուսաղէմի՝ մերձակայ սահմանները փորելով կը գտնուին, ուր գաղտնի աղբիւրներ կը հոսին . եւ կամ ջրմուղի միջոցաւ՝ որ կրնաքեալ Աղբիւրին եւ Արուսի ջուրերն կը բերէ (1), բաց ի ասոնցմէ ուրիշ նաեւ շատեր, զորս իրենց մերձակայ վայրաց մէջ նշանակեցի :

Առաջնոյն վրայ՝ այս երկրորդ պայմանն առաւելութիւն ունի այն տարապայման խորութեան պատճառաւ զոր մարդ ստիպուած է հորերուն տալ, եւ միանգամայն այն ժողովրդուն կարծրութեւ պատճառաւ՝ զորս պէտք

է հատանել, Պէտք չէ սակայն հորերուն դիմել քաղաքի մը սննդեան համար մանաւանդ խորիններուն, բայց եթէ երբոր ուրիշ տեսակաւ ճարելու կարելիութիւն չմնայ, Այսու աւանայնիւ ես երկու պայմանաց վրայ ալ հմտութիւն ունենալու համար ամեն ճիգ ի գործ դրի, որպէս զի կարող ըլլամ ցուցնել Սուրբ քաղաքիս համար ինչ որ բացարձակապէս կրնայ գործադրիլ . յուրն Երուսաղէմի մէջ այնպիսի արժանաւորութիւն մ'ունի որ միշտ օգտակար է գիտնալ թէ ուր կը գտնուի անկից :

ԱՌԱՋԻՆ ՊԱՅՄԱՆ

Հայթայթանք հորերու միջոցաւ :

Հորերու միջոցաւ գտնուած արեւելեանոր աղբիւրներ՝ Երուսաղէմի Արեւելից եւ հարաւային Արեւելեան կողմը կ'ընան, նմանապէս քաղաքի ներսիդին ալ կը գտնուին, եւ թէպէտ այս վերջինները աւելի տկար եւ խորունկ են քաղաքէն դուրս գտնուածներէն, այսու ամենայնիւ յիշատակուելու արժանի են, եւ ահա ասոնցմէ կ'սկսիմ :

Այս աղբերաց առաջինը՝ դամասկոսի դրան յանդիման փոքրիկ հրապարակի մը հարաւային կողման եզրն եւ Քաղաքին պատկանեալ տան մը անկիւնը կը գտնուի . Սենք զայն Այն Բէափիլ Փաշա կ'անուանենք : Այս աղբիւրին հասնելու համար 70 կամ 75 մետրի չափ խորութիւն տեղ փորելու է (1), 11 կամ 12 մետր տեղ քա-

(1) Այս այն կնքեալ աղբիւրն է, որուն յիշակութիւնը Սողոմոնի երգ երգոցին մէջ կայ. (Գլ. 4. 23. 12) :

(1) Այս հորն ու Սրբոյն Աննայի եկեղեցւոյն մօտ եղած հորը փորուած միջոցին, հաւանականութեանց նայելով մինչեւ սահմանաւ խորութեանը չհասած՝ փոքր աղբիւրներ եւ ծորումներ պիտի գտնուին որք ըստ տարուան իւրաքանչիւր եղանակի կը փոփոխուին, եւ կարելի է միանգամայն իսկոյն չորանան թէպէտ այս ջուրերը բուն աղբիւրը չեն :

րերու մանր կտորուանք են, որք դի-
զուած են այն տեղ 2—3000 տարիէ
ի վեր, իսկ մնացածն՝ միայն ժայռեր
են, որոց մէջ աղբիւրը կը հոսի :

Երկրորդ աղբիւրն՝ Սրբոյն Լննա-
յի ետեւն է, զոր մէնք Լյն—Հինդի
կը կոչենք : Այս աղբիւրը գրեթէ ա-
ռաջնոյն հաւասար խորութիւն ունի
փորուելու երկիրն ալ մի և նոյն հան-
գամանքն ունի :

Երրորդն՝ Գեթսեմանի սրարտիզին
եւ սուրբ կուսի գերեզմանին մերձ
Յովսափատու ձորին մէջն է : Սենք
զայն Լյն—Սիւս—Իսա կ'անուանենք :
Լսիկայ գծի մը վրայ կը գտնուի որ
երկու 3 և 3 (կրկին) նշանակուած
թուոց մէջ տեղն է : Հիւսիսային Ա-
րեւելեան կողմն եղող 3ը՝ Հայոց
վանքին վերաբերեալ երկրի վրայ է :
Իսկ միւսն՝ որ հարաւային Արեւմդ-
տեան կողմն է, իսպել Պէյի հողին
վրայ է :

Այս աղբիւրն ամենէն կարեւորն
է, և Երուսաղէմը անուցանելու հա-
մար հորեր փորուելու պայմանն ըն-
դունուի, խորհուրդ կուտամ որ աշ-
խատութիւնը այս հորէն սկսին : Աոր

ջուրը՝ համեմատութիւն միւսոց հետ
առատ և լաւ է : Իւր խորութիւնը
գրեթէ 50 մեթրի կը հասնի : Այս
10 մեթրի չափ կեղրանի հեղեղա-
տէն թրջուած ցամաք պիտի ձեղքու-
ւի, իսկ մնացորդն յաջորդաբար կար-
ծրապինդ ժայռերէ (Strates calcaires) կը
բաղկանայ փոփոխական կործրութիւն,
երբ միանգամ աղբիւրին հասնուի,
բոլոր անոր հետ ընկերացող ջրոց դո-
ղն հոսանքներն ալ միացնելու հա-
մար գետնափոր փոքրիկ ճանապարհ
մը շինել տալ օգտաւէտ պիտի ըլլայ
4 կամ 5 մեթրէ շիթենեաց լերան
ուղղութեամբ, և անոր համանման մէկ
մ'ալ Ս. Ստեփաննոս դրան ուղղութիւն :

Չորրորդ աղբիւր՝ գեհենի ձո-
րին մէջն է ձիթենայ մը տակ, որ Սե-
լոմ գիւղին բնակիչներէն Սուսթա-
ֆա անուն անձին կը պատկանի մենք
զայն Լյն—Լոսէֆ կ'անուանենք (աղ-
բիւր Յովսեփոս) :

Ի սկզբան 7—8 մեթրի չափ հող
և դիզուած քարեր կան, իսկ մնացոր-
դը կարծր ժայռ մ'է : Յուրը 45 մե-
թր խորութենէն նուազ և շատ լաւ
է, բայց հոսած ժամանակ կը բաժ-
նուի, և պէտք է նեղանցք մը շինել
10—11 մեթր դէպ ի այն մեծ ժայռը
որ Հարաւի ուղղութեան մէջն է Ա-
կեղդամայի վրան :

Հինգերորդն՝ Պիլատէ—Էս—սո—լեան
ըսուած մեծ աւազանին վերին ծայրն
է, այս տեղին ջուրը շատ լաւ է բայց
աղբիւրը փոքր ու խորունկ է 68—70
մեթրի չափ կ'ըլլայ և փորուածքը բո-
լորն ալ ժայռի մէջ : Հորերուն ամե-
նէն աւելի լայնութեան ուղղութիւ-
նը պէտք է ըլլայ Արեւելէն դէպ ի
Արեւմուտք : Այս հոր Սնէլէֆէոր
կ'անուանենք :

Ետեք են ահա այն կարեւոր աղ-
բիւրները, որք երուսաղէմի մօտ կան :

որ մէկ կամ շատ հոսանքներով կը թափուի, այդու
ամենայնիւ արհամարհելու ալ չէ, այլ պէտք է թո-
ղուլ դանտը որ հորին մէջ յորդեն :

2. Հորերն երբ մեթր արամագիծ ունենալու
են, թէ նախամեծար կը տեսուի չորեքիւսի կամ
երկայնած կաղնուածք մը ընդունիլ : 3 մեթր երկայ
նութիւն 1 1/2 կամ 2 մեթր լայնութիւն պիտի
ըլլայ : Երկայնութեան ուղղութիւնը մի և նոյն
կամ հաւասար չէ : Այս բաժնէրտ առաջին հորին
համար են, իսկ երկրորդին՝ որ Արեւելէն Ա-
րեւմուտք է, պիտի նշանակեմ միւս հորերուն մէջ :

3. Երբոր հորը սկսի երեւնալ պէտք է յատակէն
փորել շարունակել մինչեւ երկու մեթրի չափ ալ
խորութիւն :

4. Պէտք է մեծ խաչեմութեամբ դործածել վա-
ռօգը երբ որ ջրոյն հասնելու մօտ ըլլայ, վասն զի
պայթուանքը անոր ժայռերը խորտակելով կ'ընայ
աղբիւրին մէջ պատուաւորներ բռնալ, ուրկից ջու-
րը խուսափելով կրկին բռնուելու կարելի չ'ըլլայ :

Լսոնցմէ զատ ուրիշներ եւս գտնելու համար պէտք պիտի ըլլայ շատ մը հազարամեթր տեղեր հեռուն երթալ։ Երգ՝ եթէ մարդ հեռաւոր և խորունկ աղբիւրներ գտնել հանելու ստիպուած է, աւելի լաւ չէ քիչ մ'ալ հեռու երթալ և որոնել այնպիսի աղբիւրներ, զոր 'ի վեր հանելու կարեւորութիւն չկայ, հապա պարզապէս ջրմուղի միջոցաւ կուգայ, որուն վրայ ահա պիտի սկսինք խօսիլ պատմութեանս երկրորդ մասին մէջ։

ԵՐԿՐՈՐԴ ՊԱՅՄԱՆ

Հայթայթանք ջրոց ջրմուղի միջոցաւ։

Եւս ջրմուղն՝ նախ կնքեալ աղբիւրին ջրերը կը բերէ, ապա քիչ մ'ալ հեռուէն Երրուպի ջուրերը Եւս ժըմ այս երկու աղբերաց տեղեկութիւնն ընդարձակելու համար պիտի նշանակեմ գործադրելի աշխատութիւնքը, գիծն՝ որուն ջրմուղը պիտի հետեւի, ջրմուղին որպիսութիւնը, և որոյմանին կատարման մէջ հետեւելու գործնական ընթացքը։

1. Աշխատութիւնք Արրուպի եւ կրնալ աղբիւրին ջուրերը շատցնելու համար։

Եւս՝ Կնքեալ աղբիւր (Ուազ-է-Եւսին)։

1. Եւս աղբիւրին աւազանը պէտք է 1 ¹/₃ — 2 մեթրի չափ ցածնայ։

2. Եւսին նիւմէքօէն սկսեալ, որ բուն կնքեալ աղբիւրն է, պէտք է գետնափոր անցք մը շինել հիւսիսային Երեւելից ուղղութեան մէջ գէպ 'ի այն սահմանը, Պալէ-Եւս-Երաֆի հիւսիսային Երեւմտեան անկիւնէն 20 մեթր հեռաւորութիւն ունի։ Եւս նեղանցքին նպատակն է գտնել կնքեալ աղբիւրին այն մասը, որ երբեմն այս ուղղութեամբ կ'ու-

գար, և որուն ջրանցքը այժմ չորցած է, ջուրն աւելի հեռուն և ցած պէտք է հոսի։

3. Եւս աղբիւրէն սկսեալ՝ որ երկրորդ նիւմէքօ աւազանի մէջ կը հոսի մինչեւ վերին աւազանի անկիւնն ու իրեն հարթութենէն 50 հարիւրամեթր վար նեղանցք մը պէտք է շինել Հարաւային Երեւմտից ուղղութեամբն գէպ 'ի 5 մետրն մօտ եւ այգւոյ մը ցանկին անկիւնը։ Եւսնեղանցքով ուրիշ աղբերաց յայտնութիւններ ալ կ'ըլլան։

4. Կնքեալ աղբեր Երեւմտեան կողմն հազարամեթրի մը չափ հեռու և իր հաւասարութենէն բաւականին բարձր Պալէ կոչուած տեղւոյն մէջ ջրոյ սահմանք մը կայ, որ յայտնուած է արդէն փոքրիկ խաղացմունքներով, զորս կարելի է միայնել խրամի մը օգնութեամբ։ Հիւսիսէն գէպ 'ի Հարաւ գրեթէ մեթր մը երկայնութք, և ուրիշով մը գէպ 'ի Երեւմուտք 30 մեթր երկայնութեամբ։

5. Եւս ջուրը՝ որ միանգամ հագացուած է, երկամեայ փոքրագոյն խողովակներով հեշտեալ կը բերուի մինչեւ կնքեալ աղբիւրը, փոքրագոյն ըսինք, որովհետեւ փոքր տարածութիւն ունենան պիտի։

6. Հիւսիսային Երեւմտեան ուղղութեան մէջ կէտ մը նշանակեցի, ուր խորունկ աղբիւր մը կը հոսի, թէպէտ Կնքեալ աղբիւրէն աւելի բարձր։ Եւսին մեծ աշխատութիւն կը պահանջէ, որուն խորհուրդ կուտամ առնեն վերջ ձեռնարկել։ Եւս հորին ջուրը ամեն պարագայից մէջ կրնայ հաղորդակցիլ (Ուազ-է-Եւսին) հետ կամ նեղանցքով մը և կամ խողովակով։

2. Արրուպին չուրնը շատցնելու:

1. Պէտք է օրինաւոր մարքել Մ. Բ. րուպի աղբեր ջրանցքը նիւմերօ մէկ մասին մէջ:

2. Պէտք է s-x խրամը բանալ նիւմերօ 2ին մէջ 4-5 մեթրի չափ խորութեամբ: այս խրամը նպատակ ունի ծանօթ և անծանօթ աղբիւրներ բաժանել իրմէ աւելի բարձր եղած սահմանաց վրայ, ուր տեղ զանաք նշանակած եմ:

3. Պէտք է բուն Մ. Բ. րուպի քաղաքի աղբիւրին ջուրերը s-x խրամին ջրոց հետ միացնել ընդհանուր աւազանի մը մէջ ուրիկից ջրմուղը կուգայ, այն տեղ շատ ջուր պիտի ըլլայ ⁽¹⁾:

11. Գիծն՝ որուն պիտի հետևի ջրմուղը:

Ջրմուղն՝ որ մինչեւ Բեթղէհէմ եւս կը բերէ ջուրը և որ մինչեւ Լքուսաղէմ կը շարունակուի, Թէպէտ և շատ գէշ վիճակի մէջ է իւր շրջանը լերանց բոլոր խորշերու մէջ ընկելով և այս պատճառաւ բաց ՚ի ուրիշ շատ մը անպատեհօթ թիւններէ տարաւ պայման երկայնութիւն մ'ալ կ'ստանայ. որով անոր կրկին նորոգումը և պահպանութիւն իսկ անկարելի կ'ըլլայ: Ուստի աւելի աղէկ կ'ըլլայ մէկ դի ձգել այս ջրմուղը Մ. Բ. րուպի քաղաքի աղբիւրին հետ որ վերջին աւազանին վրան է, և Լքուսաղէմի համար կընքեալ աղբիւրը պահպանել (Սաղ-էլ-Մ. Բ. րին իրեն մերձակայ տեղեաց մէջ յայտնուած աղբիւրներով ընդարձակուած: Մ. Բ. րի առեն նոր ջրմուղ մ'ալ կը շինուի որուն շինութիւնը՝ հընցն արժողութեան չափ հազիւ ըլլայ, և որ բաց ՚ի այլ օգուտներէ այն օգուտն ալ կ'ունենայ, որ ջուրերն այն

աստիճան սաստիկ բարձրութեան մը կը հանէ. որովհետեւ արդէն Լքուսաղ աղբիւրին և ջրմուղին երթալու կէտին մէջ վերջին աւազանին ներքին, 40 մեթրէն աւելի տարբերութիւն կայ, առանց զայն հաշուելու, որ կը վաւարուի վազքը կարճելով, այսինքն երուսաղէմ կուգայ ջուրը քաղաքին ամենաբարձր սահմաններէն և կրնայ ամեն կողմ բաշխուիլ ուր որ ուզուի աղբիւրի կամ ջրբուխի դուրսեմբ:

1. Պէտք է միշտ խրամները ամենացած կողմէն սկսիլ, ուր որ ջուրը տանիլ կ'ուզուի, և ուր նշանաւոր է շատ ժաւերու վրայ: Պէտք է անփութօք հետեւիլ այն կարբին, որուն վրայ կը Թաւալի ջուրը:

2. Նշանակուած վազքերուն աւան մասանց վրայ ալ ջուր չգտնուիր միայն տեղ տեղ պիտի պատահին առուակներ, զորս իրարու հետ խրամըն պիտի միացնէ:

3. Լքուսաղ ջրոց համուի, պէտք է փորելը շարունակել, մինչեւ որ աղբիւրը և անոր ընկերացող բոլոր ջուրերը խրամին մէջ 15-20 սանթրիմեթրէ ջրվէժ մը կազմեն:

4. Պէտք է որ խրամն 2 մեթր ըլլանութիւն ունենայ:

5. Խրամին մէջ անձեփ քարերով ջրանցք մը կամ ջրմուղ մը պէտք է շինել, և բաւականին ալ ընդարձակ պիտի ըլլայ, այնպէս որ մարդ մը կարող ըլլայ դիւրս Թեամը մէջ չըջիլ երբ որ յետ ժամանակաց նորոգութեան հարկ ըլլայ:

Ուրեմն կնքեալ աղբիւրէն սկսեալ վերին աւազանին վրայէն Մ. Բ. րեւելէ կ'երկայնի նոր ջրմուղը Պէյ-Ֆալէի դէմ յանդիման եղած լեռը, ապա Բեթղէհէմի լերան Մ. Բ. րեւմտեան կողմըն, Սաղ-էլ գերեզմանին և սուրբ Լիզիայի մօտէն անձնելով Պագայի

(1) Նշանակուած խրամներուն վրայ:

դաշտը զոր թիւն հէ մի ճանապարհն
կը կորէ , և վերջապէս դէպ ՚ի Հրէ-
ից շէնքին աղօրիքն և անկից հիւսի-
սային Մրեւմտեան կողմէն Աշու-
սաղէմ կը մտնէ , որ ամենաբարձր
կողմն է (1) :

Արրուսի աղբիւրը կնքեալ աղբիւ-
րէն շատ բարձր է :

111. Զրմուդին շինութեան ատաղձքն
ու տեսակութիւնը:

Պէտք է որ ձուլածոյ և երկաթ-
եայ խողովակներ ՚ի գործ գրուին ,
որով ջրոյն վազքը կարճելու համար
կնճափող գործածեղ ներելի կ'ըլայ ,
և որ ջրանցքին անխորտակելի մնա-
լուն ալ մեծապէս կը նպաստէ :

4. Աշխատութեան կատարման համար
գործնական քննաք:

Իբր ճշմարիտ ընդունուած է և
բնաւ ալ երկքայելի չէ որ կնքեալ աղ-
բիւրն ու Արրուսի աղբիւրը (շրու-
սաղէմի անդեան համար կը բաւեն
առատութեամբ :

Սուրբ քաղաքիս ժողովրդեան որ-
քան կարելի է շուտով վայելել տա :

(1) Այս գիծը գրեթէ այն է , որուն կը հետե-
ւէր Սողոմոնի հեղինակութեան ընծայուած հին
ջրմուղ մը և որուն բաղմաթիւ հետքերը մասնա-
ւորապէս Ռայքելի գերեզմանին մօտ տեղուանքը
կը տեսնուին :

Այս ջրմուղին բրած այցելութեան մէջ ինձ
ամենէն շատ օգտակար թուեցաւ , որ նա կ'ըլլէ
և կ'իջնէ , և այս՝ աղաքացի է թէ հին ժամանակ
կը ճանաչէին մարդիկ բնական կնճափողն գործա-
ծութիւնը , այսինքն ջրոյն այն զօլութիւնը՝ զոր
ունի իրեն հարթութեանը իջնելու եթէ սրտաշա-
ճապէս ներփակուած է . և սակայն կարծես Հռով-
մայեցիք երբեք ճանչցած չեն : Այն կետին վրայ ,
ուր կնճափոխ կամ կոր խողովակը կը կաղմուի ,
ջրմուղն արտաքոյ կարգի հետաքրքրական եղանա-
կաւ մը շինուած է . այսինքն , խոշոր քարի կտորներ
են ծակուած իրարու մէջ հագուցուած և ծեփով
լապուած են , որ մինչև ցարգ խանգարիչ տարե-
բայ գէւ դրած է :

Ըստ համար բարիք մը , որ անոր կեան-
քը պիտի ապահովէ ջրոց կարօտու-
թենէն և չքաւորութենէն որուն մեծ
չորութիւնը անոր մահ կ'սպառնայ (1)
բարիք որ պիտի անմահացնէ այն ան-
ձին անունը , որ անոր գործադրու-
թիւնը կամ ձեռնարկութիւնը կը
յաջողցնէ . լաւ չէր ըլլար նախ՝ ջր-
մուղին շինութենէն սկսել , այն նոր
հանգամանօք զորս այժմ պատմեցի ,
մինչեւ կնքեալ աղբիւրը և այս աղ-
բիւրը այս ինչ կամ այն ինչ եղանա-
կաւ բերել : Այս ապա որքան գործադ-
րելի աւազաններ ունենայ մարդ այն-
քան իւր քանակութիւնը շատցնելու
համար այս աղբիւրին մօտ ՚ի գործ
դնէ այն աշխատութիւնքը , զորս նը-
շանակեցի սկսելով դիւրագոյններէն :
Վերջապէս ժամանակին մէկ նոր եւ
աւելի ուղիղ գծով այս ջրմուղին վը-
րայ կը յաւելցուին Արրուսի առատ
ջուրերն : Այս եղանակաւ ներկայ չա-
րեաց առաջին կ'առնուի , և Արու-
սաղէմի մէջ ջրոց սակասութիւն կըր-
կին չպատահիր , բոլորովին ապագայն
ապահովեցնելով :

Վիւրին համազուիլ թէ երկրորդ
պայմանն՝ առաջինէն շատ օգտակար
է . իսկ ջրոյն շատութիւնն ու մե-
ծութեան գալով , միմիայն կնքեալ
աղբիւրը բոլոր հորերուն մէջ պարու-
նակուած ջրոյն չափ ջուր կուսննայ .
եթէ միանգամ իւր աւազանը ցած-
նայ և խորամանկը գործադրուին , և

(1) Երուսաղէմի մէջ ձմրան երկու կամ երեք
ամաց միջոցին միայն կ'անձրեւէ , եթէ անձրեւաց
միջոցին ջրամբարները լեցուեցան , այն ատեն մեծ
խնայողութեամբ , որուն մարդութիւնն ալ բնակա-
նորար կը մնասի , մինչև յաջորդ ձմրան կրնան
սպասել : Իսկ եթէ ընդ հակառակն ինչպէս այս
տարի , քիչ կամ բնաւ չ'անձրեւէ , հասարակութե-
ն աղէտքը սոսկալի է : Կրնեն որ երկու ամիս յառաջ
Երուսաղէմի մէջ խմելի ջուրը 75 տանթիմ կամ
մէկ ֆրանք կ'արժէ եզեր մէկ տիկը , որ միջին կեր-
պով 25 լիտր ջուր կը պարուանկէ :

Արքուպի աղբիւրը՝ անկից տասն ան-
գամալ աւելի ունի։ Տրոյն յատկու-
թեան գալով, թէպէտ հորերուն՝
ջուրը լաւ կ'ըլլայ, և շատ լաւ խի-
մանաւանդ 4 նիւմէրօին մէջ, սակայն
կնքեալ աղբիւրին և Արքուպին ջու-
րերն լաւագոյն են։ Անքեալ աղբիւ-
րին և Արքուպին մերձակայ վայրաց
մէջ գտնուած բոլոր աղբիւրները շատ
գիւրութեամբ կրնան միանալ։ հորե-
րուն ջուրը 'ի հարկէն զատուած են։
Այս երկու պայմանաց մէջ անհուն
տարբերութիւն մ'ալ այն է որ հո-
րերուն ջուրը մեծաւ աշխատութիւ
պիտի հանուի, իսկ ջրմուղի ջուրն
Լըուսաղէմի բարձր սահմաններու
վրայէն պիտի գայ, և անկից Քաղա-
քին ամեն կողմերն ալ բաշխուի։

Պարտաւոր եմ, իբր օգտակար բան
գիտնալու, միանգամայն այն կարե-
ւոր աղբիւրները յիշել՝ որք Ռամաի
Ռամալլահի և էլ Պիլիէի ուղղութեան
մէջ կը գտնուին որոց բարձրութիւ-
նը նոյնպէս Լըուսաղէմ քաղաքէն
բարձր է։

Քննական երկար ճանապարհոր-
դութեանց մէջ զոր պարտաւորեցայ
ընել, Լըուսաղէմի շրջակայքը բոլոր
ուղղութեանց մէջ բազմաթիւ ան-
ծանօթ աղբիւրներ նշմարելի, որք
շատ մը ջրէ քիչ ու շատ զուրկ տեղ-
եաց կրնան օգտակար ըլլալ։ Ետնցմէ
առաջինն է Տէր-ապանի մէջ Պիլի-ճալ-
լահի մէջ նոյն իսկ Հաօնահ հորին տակ
որ բաւական է միայն զայն խորունկ
ցունել։ Ռամալլահի մէջ քանի մը վայր-
կենէն ծածկեալ աղբիւր մը 'ի լոյս հա-
նեցի։ Սէկ ժամէն սակաւ աշխա-
տութեամբ այս հորը դուրս բարձ-

րանալով արդէն փոքրիկ վտակ մը կը
կազմէր մաքուր և յստակ ջրով և ա-
հա ցաւալի դէպք մը եկաւ ուղղու-
մէրը խախտեց։ Խորհուրդ կ'ուտամ
նորէն անոնց ձեռնարկել և շարու-
նակել մինչեւ որ աղբիւրը բոլորովն
յայտնուի։

Վարձեալ Սիֆէհ գիւղին մէջ ու-
րիշ հորեր նկատեցի քիչ խորութիւ-
թայիպէհի մէջ մեծ խորութեամբ։

Սուրբ Սադասի ճանապարհին վը-
րայ վանքը հասնելէն ժամ ու կէս յա-
ռաջ 25 մեթրէն պակաս խորութեամբ
աղբիւր մը կայ, և Սադասի ու Նէպի
Սասի մէջ տեղը բարձրացած հողա-
կոյտի մը տակ 2 խորունկ և մեծ աղ-
բիւրներ կը հոսեն, որք Այի-Ֆէսիհա-
հի հետ յարարերութիւն ունին։

Չկրցայ աղբիւրներ գտնել Քեթ-
ղէ հէմի մէջ, որ ջրոյ մասին ամեն
տեղերէ աւելի զրկեալն է։ Պիլի-ճա-
հոր աղբիւր մը ունի, բայց անհնա-
րին խորութեամբ։

Չեր աղնուութիւնը կրնայ այս
երկու տեղումները թողուլ որ այն աղ-
բիւրը վայելին, որ Սողամնի ամենա-
ցած աւաղանին տակն է, և զոր իրեն
հարթութե պատճառաւ անկարելի է
Լըուսաղէմ բերել նոր ջրմուղովը, ո-
րուն վրայ խօսեցայ։

Վստահ եմ որ Աստուծոյ օգնու-
թիւ և Չեր բարերար ջանից շնորհիւ
այս աղբարարութիւնքը Սուրբ Քա-
ղաքիս և գաւառիս ապագային մի-
անգամայն շահաւէտ պիտի ըլլան։

Այս յուսոյ զգացմամբք լի։

Պատիւ ունիմ Չերդ աղնու-
թեան ըլլալ։



ԱՐՁԱՆ ՅԱԻԵՐԺԱԿԱՆ

Ի Ս Գ Ա Լ Ի Մ Ա Հ

ՏԻԿՆՈՋ Ա.Լ.ԷՔՍԱՆԵԱՆ

ԱԶՆՈՒՈՒՀԻ ՓԱՐԻՋ ՀԱՆՐԱՊԵ

Այնուպէս Տիկին Ալեքսանդրայի փարիզ հանրմի իւր գլխաւոր առ զորմած բնութիւնն ու անցուցած կեանքը զինքն աշխարհի ծանօթ ըրած էին :

Ամոյս սկիզբները գրեթէ քառասնամեայ հասակին մէջ իւր մահկա նացու ընթացքը կնքեց առ Աստուած փոխելով Ալեքսանդրիոյ մէջ : Սա բարեպաշտուհի Տիկինը , որպէս զի իւր վախճանէն վերջն ալ ան մահ պահէ աշխարհի մէջ իւր բարեաց յիշատակը , իւր կտակն ալ կըն քած է կենդանութեանը , կտակահատար որոշելով Տ. Գասպարեան ՍՆԺ . և Ազգասէր Յակոբ աղայն : Սոյն կտակին մէջ կը կտակէ իւր տանը ամեն կահ կարասիքը Ս. Յակոբեանց վանուց Արուստակէմի , որ սոյն կարասեաց արժէիւքը կալուած գնուի Ս. Աթոռոյ՝ հանգուցեալ Բարեպաշտուհի Տիկնոջ և իւր ամուսնոյն ի յիշատակ :

Հանգուցեալ բարեպաշտուհի Փարիզ Հանրմի մահուան յաւերժ յի շատակ կը կանգնեցնէ Ս. Աթոռ տալով իրեն Սուրբ Աւետարանի իստ տացած երանութիւնը . « Արանի ողորմածաց , զի նորա զոգորմութիւն գտցեն : Սաբլ . Ե Դ » :

ՓԱՐԻՍ ՀԱՆՐԱՊԵՏԻ ԿՏԱԿԻՆ ՄԷԿ ՊԱՐԲԵՐՈՒԹԻՒՆԸ

Այս բոլոր կարասիքը գրուել եւ ծախուի օրինաւոր գնով . և յիշեալ կարասեաց դրամով Լըուսաղեմի Ս. Յակովբայ վանուց Պատրիարքին գիւտութեամբը կալուած առնուի ուր որ ըլլայնէ . և վախճի ըլլուի իմ և հանգուցեալ ամուսնոյս անուամբ Ս. Յակովբայ վանուց որ Ալըուսաղեմ . Լը ինչ որ եկամուտ ըլլայ կալուածներէն , նախ կալուածներուն տարեկան նորոգութեանց և պիտոյից գործածուի , և այս նորոգութեանէն ըզկնի ինչ որ աւելնայ , Ս. Յակովբայ Լիկեղեցւոյ մէջ գտնուած աղքատաց և անկեղծ պահասութիւններն հոգացուին . վասն ընդհանուր բարեգործութեան Լստուծոյ ողորմութեամբը :

Ս. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն

Լիկիպոտոսէն ստացուած նախակաշին Գեր . Սէրուլի Լիպիսկոպոսի վըրայ սկսան անպատկան ծանօթութիւններ տալ :

Լիգ . Վարչութիւնը որ խրկեց յիշեալ Լիպիսկոպոսը Ալիպոտոս ջրանցքին բացման հանդիսին ազգայնոց ներկայացուցչութեան պաշտօնը փարելու որոշմամբ , սա այսօր սկսած է առաջնորդական գործերուն ալ ձեռք երկարցնել հակառակ զինքը խրկող վարչութեան հրամանին :

Լիկիպոտոսի առաջնորդութիւնը սուրբ Լըուսաղեմի Պատրիարքութե վիճակն ու իրաւունքն ըլլալն արդէն բոլոր Լիգին ծանօթ խնդիր մը ըլլալովն հանդերձ , յիշեալ Լիպիսկոպոսի մտածմանցը մէջ առաջնորդութիւնը

Լըուսաղեմի Պատրիարքութեան բաժնեւոր անարգ մղում մը կը տեսնենք . թէեւ տարբեր համարումն ունէինք իւր փայ :

Այս առաջնորդութեան Լըուսաղեմի Պատրիարքութեան վերաբերիլը քաջ գիտեն Լիկիպոտոսի Լիպիսկոպոսի որ ժողովոյ մոռցած ըլլալ կը ձեւացընեն Լիկիպոտոսի ազգայիններէն մէկ քանի անհատ միայն որ և իյէ նը պատահաւ մը :

Այս մոռնալ ձեւացնող անհատներն անցեալ տարի Լիգ . վարչութեան կը գանգատէին ըսելով թէ , մինչդեռ ուրիշ տարի իրենց Լըաջնորդ Գեր . Վարչիէ Լիպիսկոպոսը Լիպոտոց Լիպիսկոպոսը կը ձեռնադրէր , այսօր իրենց առաջնորդ մը չունին , և ջրանցքին բացման հանդիսին մէջ Լիպոտոց Լիպիսկոպոսը միանգամայն ներկայացուցիչ պիտի ըլլայ Հայոց կողմէն :

Կը յայտնեմք այս նորահաս Հայ անհատներուն , որ Լիպոտոց Լիպիսկոպոսը կողմէն ձեռնադրութեան առաջին Լիպիսկոպոսը նստող ոչ եթէ Լիկիպոտոց Լըաջնորդ Վարչիէ Լիպիսկոպոսն էր , այլ Լըուսաղեմի Պատրիարքի փոխանորդ Վարչիէ Լիպիսկոպոսն էր , իրպէս իրաւունքն այս ձեռնադրութեանց համար Ս. Լիպիսկոպոս . Պատրիարքաց խրկուած խնդրագրերը հաստատուն կը մնան : Լը շատ ասեն Ս. Լիպիսկոպոս Պատրիարքներն անձամբ ձեռնադրութեանը գտնուած են և ձեռնադրած , և շատ անգամ ալ իրենց փոխանորդ Լիպիսկոպոս մը խրկած :

Այս խրկուելիք Լիպիսկոպոսը չէր խրկուեր երբ այն տեղ Ս. Լիպիսկոպոս կողմէն նստող Լըաջնորդն Լիպիսկոպոս կ'ըլլար : Լըուսաղեմի Պատրիարքութիւնը որ մինչեւ ցայսօր գրեթէ լուծ է այս մասին , և ձայն չհանած :

սակայն և այնպէս մինչեւ ցարդ ալ
այնպիսի Լպիսկոպոս մը կամ վարդա-
պետ մը չէ եղած, որ ինքնիշխանու-
թեամբ խառնուած ըլլայ այս Լգիսկո-
պոսի առաջնորդութեան խնդրոյ :
Եթէ Լգիսկոպոսին առաջնորդ պէտք
էր, կրնար իւր Պատրիարքէն ուզեր .
և իրեն չէր զանար : Իսկ Ղեր . Սեւ-
րապ Լպիսկոպոսը եթէ իւր գթու-
թեանէն ստիպեալ կ'ընէ այսպէս ըսենք :

Եւս գթութիւնն ունեցող Լպիս-
կոպոս մ'ալ երկու վիճակներու մի-
ացեալ առաջնորդութիւն չէր թողուր,
որ կը պարունակէ առ նուազն 10000
ժողովուրդ, և չէր գար Լգիսկոպոս նըս-
տէր ապօրինաւորապէս միայն 200 ան-
ձի համար : Եւսոր վրայ հարկաւ պիտի
զտրմանամք . ինչ հետեւութի կ'ու-
նենայ, առաջնորդութեան մը ճանա-
պարհը կարճ, վարձքը շատ, այսինքն
պզտիկ առաջնորդութեան մը մեծ
առաջնորդութիւն մը զոհել : Կանա-
ւանդ որ յիշեալ Լպիսկոպոսը կրնայ
գիտցած ալ ըլլալ թէ Լաւնորդի մը
վաւերականութիւնն ինչպէս կ'ըլլայ
օրինաւորապէս :

Սակայն ոչ եթէ առաջնորդի մը
պէտք եղած պայմանները չգիտէր յի-
շեալ Լպիսկոպոսը, այլ միայն իւր
գործերէն հետեւեցնելով վստահապէս
պիտի ըսեմք, թէ սկսած է նենգու-
թեամբ իւր մարմնայն հոգ տանիլ :

Եւս գործերէն միայն մէկ հատը
որ ըսեմք, բաւական է ամեն իմաս-
տասիրաց հետեւեցնելու, թէ իւր
նպատակն ինչ է :

Տիկին Ալեքսանեան Անուուհի
Փարիս հանրմի վախճանելէն վերջը,
մէջ տեղը մէկ կտակ մը կը հանեն որ
Լաւնորդի կնքովը կնքուած է եւ
թաղական խորհրդոյ ներկայութեամբ
բը դրուած եւ կնքուած : Սոյն
կտակը առնելով թաղական խորհրդ-

դոյ անդամներն, Յակովբեան Թադ-
ւոր և Տ. Գառարեան Սեւ . եղ-
բայրներէն հանգուցելոյն ինչքերը
գրի առնելու կ'երթան, սոյն ժամանակ
հանգուցելոյն անտուկէն թուղթ մը
կ'ելլէ, որով Հանգուցեալ Փարիս
Հանրմը իւր կտակը կը թողու կտա-
կակառար յատկացնելով Գառարեան
Աղգասէր Յակովբ Աղայն . (որն որ
նոյն միջոցին ալ Օմիւռնիա կը դրա-
նուի եղեր) . այս կտակը միւս կտակ
ըսածին հակառակ կտակելով, հան-
գուցելոյն կնքովն ալ կնքուած է, և
ներկայ եղող երեք հոգիի վկայութիւն
ալ ստորագրուած : Սինդեու Աղէք-
սանգրիոյ թաղական խորհրդոյ յար-
գոյ անդամները երեսփոխանով հան-
դերձ առանց կտակողի կնքոյն, կտակ
մը ունենալով կ'երթան ինչքը հաշ-
ւելու և տունը կնքելու, և այս տե-
սակ կտակի մը տակը Սեւրովալ Լ-
պիսկոպոսը կը կնքէ առաջնորդական
կնքով :

“Չիք ինչ ծածուկ որ թէ ոչ յայտ-
նեսցի, Խօսքը հաստատ ըլլալուն, թէ
և շատերն միաբանին միտք մը (կտակ
մը) փոխելու, սակայն կտոր մը թուղթ
վաւերական ստորագրութեամբ՝ կը
խայտառակէ այն ամեն աշխատու-
թիւնները և ճշմարիտը կը հանէ ՚ի
վեր :

Ետնք աւելի բացայայտ հասկեց-
ւելու համար աւելի հաստատող պա-
րագայներ կան, բայց կը լռենք ոյժմ'
պէտք եղած ժամանակ խօսիլ և դը-
րել խոստանալով :

Երդէն դրինք Սիօնի մէջ Հան-
գուցեալ Փարիս Հանրմի կտակին Ս.
Յակովբայ վանուցս վերաբերած պար-
բերութիւնը Եւս այն կտակին պար-
բերութիւն է, որ կտակողին կնքն ունի :

Սիօնի վերջին տետրակը դեռ մամլոյ տակ չգրած Աղէքսանդրիա յէն հասած լուրերն ստիպեցին ըղձեղ եկած նամակներն հրատարակել Ահաւասիկ երկու նամակները կը դընեմք, որոց մին Յակովբեան թագաւորի գրածն է, միւսը նոյն ինքն Սանուցս Աբիպատոսի մէջ կտրուածոց վերակաշու Արժ. Ատուածատուր վարդապետին :

Արժ. Ատուածատուր Վարդապետին նամակին օրինակը :

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ՍՐԲԱՉԱՆ ՀԱՅՐ

Այս անգամ Աղէքսանդրիա սաւտահած դէպքերը ձեզ դարձեալ ծանուցանելու պարտք կը համարիմ, որպէս զի աստի սուտ ու սխալ բարդեալ զրպարտութեամբ գրուածնելուն հաւատք չընծայէք: Աղէքսանդրիա Փարիս Հանրմը չմեռնելէն յառաջ իւր ստացուածքը կտակաւ կ'աւանդէ իւր ժառանգաց եւ այլ տեղեր, և տանը մէջ գտնուած բոլոր մօպիլեայն նը Արուսաղէմի կը կտակէ, իւր կտակահատարը կը նշանակէ կտակագրով Տէր Գառարեան Ս. Յակովբեանը: Այս անձն այս օրերս մեզի նամակաւ լուր կուտայ որ Արուսաղէմի յատկացեալ մասը ձեզ տրուելու համար Աղէքսանդրիա գայք, գալէն վերջը գնացինք իւր տունը որ Փարիս հանրմին է, ուր տեղ կարքանի մի կնքուած սենեակներ, յիշեալ Յակոբ աղայն բաց ի մեզմէ կանչեր էր նաեւ քանի մի անձինք տաճն և հինգ հոգիի չափ հայ, յոյն, ֆրանգ և ըսպանիայի մեծ թարգմանը, ասոնց ներկայութեան հրատարակեց որ ես հանգուցեալ Փարիս հանրմին կը

տակահատարը ըլլալուս, ձեր ներկայութեան այս դռները պիտի բանամ եւ մէջը եղածները պիտի գրեմ, միայն դուք տեսածնուդ վկայ ըլլանուդ համար ստորագրութիւնդ սա տեղս գրէք, ստորագրեցինք բոլորս ալ, մեր գտնուելն ալ Արուսաղէմի բաժին ըլլալուն կտակին մէջ գտնուեցանք, բայց գործադիրը դարձեալ Յակովբեանը:

Այս գործողութիւն վերջը դարձանք Աղէքսանդրիա, Ապիսկոպոսը որ արդէն իմացեր էր, մեզմէ ալ լսեց, շատ մի բարկացաւ և էվէլ պոկաւ խօսեցաւ մեր այն տեղ գտնուելուն համար: Ընդհանրեցինք վար իջանք. սենեակը եկայ ձեր Սրբազնութեան նամակ մի գրեցի եղելութիւնն իմացնելու համար, նամակը ջանթան դրի գոցեցի, ահա թագաւորը և Գէորգ Արուսեանը սենեակէս ներս մտան, սկսեցին հայհոյել ու պոռալ, շատ չոտեց եպիսկոպոսն ալ եկաւ իւր պարագայիւք Յակովբեան Վարդապետն ալ եկաւ, եղան ընդ ամէնը 12 հոգի բաց ի ծառաներէն, Ապիսկոպոսը կը հայհոյէ կը զարնէ. թագաւորը մէկ կողմէն ոչ օրէնք մնաց, ոչ մեռել, ոչ կենդանի, ոչ վանք, ոչ սրատրիարք ոչ միաբան բոլոր իրար խառնեցին, սկանչ չաւած սարսափելի հայհոյութիւններ, և սպառնալիքներ, միշտ և ինձի Այդ օղլու խրկելու, ոմանք կը պոռան «սպաննեցէք», ոմանք «ձեռքերը ոտքերը կտրեցէք», ոմանք «աչքերը հաննեցէք այս աւաղակ լէֆթերին» և այլ գարշելի և անլսելի խօսքեր որ գրեւ և լսել անգամ մարգուս զարհուրանք կ'ըրէ: Յակովբեան կարապետը երկու ձեռք վիզս բռներ կըսմէ խղիւղ մտօք: Եւ սը աթոռքաւոր գլխուս պիտի իջնայ. մէկալը վրաս ինկեր է հրէի պէս կը մշտէ. Ապիսկոպոսը իւր եղբորը հետ

զիս ստանեալու կը ջանայ, ջանթաս բռնի ձեռքէս քաշեցին առին, բացին մէջը եղած ձեռք Սրբազնութեանը դուրած նամակս առին և ուրիշ ինչ որ կար ամենն ալ ձեռքէ ձեռք ցրուեցին, դարձեալ սկսան Վհոգի հայհայելով աղաղակել ՚ի խաչ հան դդա, սպաննենք և հոս թաղենք, այս խօսքերով դարձեալ գրոհ տուին վրաս, այլ չեմ գիտեր որ այն միջոցին ինչ աստիճանի և ինչ վիճակի մէջ էի: Յակոբեան Վարսպետը դանակը քաշեր վրաս կը լիս գէր, այնքան տեսայ որ ձեռքէն բլուներ են, այլ վերջը ինչ ըլլալ չեմ գիտեր, մինչեւ որ վրաս ջուր թափելով աչքերս բացի որ զիս պաշարեր կանգնեցին են, ոմանք կ'ըսեն թէ մեռաւ բաւական է, եպիսկոպոսը եւ իւր եղբայրը կը կանչուտէին թէ ոչ տակաւին կենդանի է, այս կենդանի մնալ արժանի չէ, որովհետեւ կնիքները այս բացեր է ըսելով կը զորպարտեն, քանի որ բացողը ես չեմ, միայն տեսայ, այլ որին կը հասկըցնես. բերան բանալու հրաման չկայ եպիսկոպոսը հրաման կ'ընէ իւր եղբորը, որ ձեռքովը բերանս գոցէ որպէս զի չխօսիմ, թէ որ խօսելու չխօսելու կարողութիւն ունենալս կրնայք երեւակայել: Եպիսկոպոս Յակոբեանց հետ կ'աղաղակէ շուտ Վահրէ եղած կարուածները գրաւեցէք, եւ սենեակը կնքեցէք, անմիջապէս հեռագրեցին գիշերը ժամ վեց սենեակս կնքեցին, ցարդ կնքած է, կարուածները ինչ աստիճանի մնաց չեմ գիտեր, մերկացին մինչեւ վարտիկս նայեցան, որպէս թէ բան գողցած եմ, այլ չարութիւն չմնաց որ չըրին չորս պատին մէջ, հաղար փառք որ կենդանի մնացի, մէկն ալ նայիս որ եպիսկոպոսը չորս հատ սկերպերի ձեռքերը հաստ փայտերով սենեակիս

դուռը կայնեցուցին, և կը պատուիրեն անոնց Վրաբացի լեղուաւ, այսպէս, «այս մարդը այս տեղ բանդն է թէ որ դուրս ելլայ, առանց մէկու մը հարցնելու զարկէք գլխուն սպաննեցէք մի վախնաք ամենեւին, Վաթրիքին հրամանը այսպէս է՝ շատ մի աղաչէ՛ս վերջը, հազիւ թէ հանեցին պատուհաններուն առջեւը կայնեցուցին և իրենց չափու շն ալ դրան առջեւ, սենեակիս մէջը եղած գրիչ կաղամբորը առին, պատուիրեցին որ ոչ իմ քովս մարդ պիտի գայ եւ ոչ ուրիշ մի հետս պիտի խօսի. թողին զիս կիսամահ և դնացին, ով սարսափելի գիշեր, լուսցաւ, բայց ինչ կերպով, թերեւս աչքիս արտասուքը սենեկիս յատակը լուաց, առաւօտուն հաղար աղաչանքներով հազիւ թէ բժիշկ մի բերել տուինք որ զիս դարմանէ, անգամ մի եկաւ, միւս անգամ չտեսայ, այսպէս անօթի ծարաւ երկու օր՝ երկու գիշեր այս սենեակիս մէջ մահուան դուռը հիւանդ չորսդին պահապաններէն պաշարուած այնպէս մնացի, դարձեալ կենդանի, փառք ողորմութեան Վարդապետին: Այս հանգէսն սկսաւ հինգ շաբթի օրը ժամը տասին եւ վերջացաւ գիշեր ժամ երկու, զայս եւս չմոռնանք յիշել որ ամեն բան կատարելէն վերջը Վրապետէն գիր մի գրել տուին Շուհինին, և բռնի քաշելով հրելով ըստորադրել և կնքել տուին, որ բոլոր յանցաւորը ես ես, և այս գիրը առաւօտ Վառաւարութեան տարին ցոյց տուին, երկու օրէն վերջը հիւանդութիւնս աւելի ծանրանալով մինչեւ ոտքի վրայ անգամ չկրնայով կանգնիլ, առաւօտէն մինչ ՚ի կէս օր լացեր աղաչեր պաղատեր եմ, որ դռնէ կառք մի բերեն դուրս ելլամ զիս դարմանելու, կէս օրէն թագաւորը

եկաւ և ինչ տողնադներու մէջ ըրար
տեսաւ սկաւ գարձեար սպառն սլիբ
ներ ընել որ եթէ դուրս ելլաւ ազգին
մէջ այս եղած բաները խօսիս, գիտ
ցած եղիր որ ձեր Վանքին, Պատրի
արքին, և միաբանութեան պատիւը ոչ
ինչ ըլլալէն վերջը և ձեր ինչ ըլլալն
ալ դուք գացէք դուշակեցէք, և վեր
ջը ինչ վնասներու պիտի հանդիպիր
այն ալ դուք գիտէք, և այլ այսպիսի
սպառնալից խօսքեր ընելով եպիս
կոպոսը եւ նստողները վկայ կը կո
չէր. բանտէն ելլալով Աշգեան (Յա
կովի աղայի տունը գիտցի և այժմ
բժիշկ կը նայի, այս պատահած դէպ
քերը գրի տուններով այսօր տեղւոյս
Սահաֆրդին պիտի խրկեմ տեղեկա
յնելու համար, և գրոյս մէջ նշանա
կեր եմ որ ձեզի և Պօլիս այս եղելու
թիւնը լուր պիտի տամ: Աստի Սրբ
բազան հայր ոչ տանելու և ոչ համ
բերելու ուժ կամ կարողութիւն մը
նաց: ուր պիտի հասկցնենէ շուտ
ընէ. այսուհետեւ ոչ ես և ոչ ու
րիշ մի այս տեղ կենալու կարող չէ,
ցարդ սենեակս կիքում է, քանի որ
այս մարդիկներն այսպէս կը տեսնան
որ ինձ համար և ոչ մէկ կողմէն օգ
նութիւն մի կայ, ամեն ուղածնին
կ'ընեն, և ասկից աւելի ինչ կրնայ
ըլլալ. գրեցէք Ազգին Չեր պատիւը
պահանջելէն վերջ և մեր դատն ալ
այն տեղ աւանտի. այս օրերս Աֆէն
տինան Պօլիս պիտի երթայ վարչու
թիւնը կրնայ այս եղելութիւնը հաս
կըցնել. ինձ համար եկած հեռագիր
կամ նամակ փոստայէն կը բռնեն,
ահա այսքանս հաղիւ կարողացայ գրի
առնել մնացածը դուք կարող էք մտա
ծել. յաւել քան զայս մնամ Չեր
Իարձր Սրբազնութեան:

1870 Յուլիս 22

Մէլիքապետի:

Աստուածատու

Վարդապետ

Յակոբեան Թագաւորի նամակին
օրինակը:

Աշգ. Յուլիս 19/1 Յուլիս 1870

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ՍՐԲԱԶԱՆ ՏԵՐ

Ի սոսիս Երանայէ՛

Անուշտ ցարդ լած է Չեր Սրբ
բազնութիւնը Աշգեանեան Տիկին
Փարիս հանրմին առ Երանայէ՛ փոխե
լը, որ ասկից քանիմը օր յառաջ տե
ղի ունեցաւ: Հանդուցեալը՝ իւր
ողջութեան կտակ մի ըրած ըլլալով
ժամանակին Ազգ. Ժողովոյ անդամոց և
Առաջնորդին (1) կնքով վաւերացեալ
Ազգ. Առաջնորդարանն ի պահեստի
թողած էր (2):

Ըստ սովորութեան յիշեալին մեռ
նելէն քանի մը օր ետքը, տեղւոյս Սրբ
բազան Առաջնորդը (3) ընկերութիւն
Ազգ. Ժողովոյ անդամոց և բոլոր ժա
ռանգորդաց, հանդուցելոյն տունը
գումարութեամբ յիշեալ կտակը կար
դացուեցաւ: Բայց երբ հանդուցեա
լին արկղը բացուեցաւ, հոն գտնու
եցաւ երկրորդ կտակ մը (4) ևս, վա

(1) Եզրիտոս վեց տարին տեւել է թերեւս
որ առաջնորդ չունի, այս հրկտակը կնքող առաջնորդ
դը որն է: Ատակողին կնքն ուր է գնացեր, որ ա
ռաջնորդի կնքովը միայն կը մնայ:

(2) Կտակ մը ինչու կտակողին քով չմնար և կը
տակաւատարներու ծոցէն կ'ելլէ դուրս բոլոր աշ
խարհի գրութեանն հակառակ:

(3) Այդ որ Առաջնորդն է ձեր, որոյ առաջ
նորդութիւնը ոչ Տերութիւնը գիտէ և ոչ Ազգ.
վարչութիւնը:

(4) Այս ինչ տեսակ երկրորդ կտակ է, որ հան
դուցեալ կտակողին կնքն ու ստորագրութիւնն
ունի: Այս կտակը, որ վաւերականութեան ա
մենահաստատ փաստն ու պիտանի պարագայն ունի,
ինչ պատճառաւ երկրորդ կտակ կ'անուանուի:
Առաջնորդ չեղած ժամանակ Առաջնորդի կնք
չունենալուն համար արդեօք:

ւերացեալ ոչ յՂգ. Վառջնորդարա-
նէ և ոչ ի ժողովականաց⁽¹⁾, այլ երկու-
անհատ միայն⁽²⁾ ստորագրուած թիւնին
գրեր են : Ինչոք ապա՝ Ղգ. Վարչու-
թիւնը հանգուցելոյն տանը մէջ ե-
ղած բոլոր գոյքը ի գրի առնելով
արձանագրեց, և ստորագրեալ հաս-
տատեց զայն թէ՛ Սրբազան առաջնոր-
դէն⁽³⁾ թէ՛ ի ժողովականաց թէ՛ ի ժա-
ւանգորդաց և թէ՛ ի Վասպարեան
Սիրտիչ աղայէ որ ներկայ էր այս ա-
մենուն : Եւ հոն գտնուած քանի մը
մանրագին ադամանդեղէնք⁽⁴⁾, որք յի-
շատակուած են երկրորդ կտակին
մէջ. կնքեալ՝ օրինաւորապէս յանձ-
նուեցան Ղգ. սոյն պահպանութեան,
Եւ սուֆեան Վերդ աղային քով :

Սոյն արձանագրութենէ վերջը,
Ղգ. սոյն Վարչութիւնը ինչ ինչ պատ-
ճառներու համար արժան համա-
րեց հանգուցելոյն տան բոլոր սե-
նեակները կնքել Ղգ. կնքով. ի
բաց առեալ այն երկու սենեակնե-
րն, ուր Վասպարեան եղբարք կը
բնակին եղեր : Իսկ ապա ժառան-
գորդք՝ չուզելով որ այլ եւս Վաս-
պարեանք այս տան մէջ բնակին, ա-

ռաջակերցին, որ կամ իրենք եւս մը
նան. և կամ նոքա ևս դուրս ելեն :
Եւ որ վրայ Վասպարեան երկու եղ-
բարցմէ գիր առնուեցաւ որ, մինչ
ցկարգադրութիւն թերէքէին ի-
րենք ևս դուրս պիտի բնակին : Սե-
տի տեղական կառավարութեան գի-
տութեամբ տան դուռը ևս կնքուե-
լով, յանձնուեցաւ զայն իշխանու-
թեան պահպանութեանը :

Սինչ այս մինչ այն՝ Վասպարեան
պարոն Յակոբը որ այս պարագանե-
րուս յիշիր կը գտնուէր, վրայ հա-
սաւ. և ըստ երկրորդ կտակի ինք կը
տակահատար ըլլալ իմացնելով, դը-
րան բացուելը կուզէր, և դեռ ասոր
այն կամ ոչ որոշում մի չի տուած,
համարձակեցաւ քանի մը յոյն սրի-
կայներու օգնութիւն⁽¹⁾ սրօք և բրօք
տանիսին դռնէն ներս մտնելով տան
դրան կնքը միայն քակել, և իրենց
յատկացուցած սենեակին մէջ բը-
նակիլ :

Նոյն օրէ ի վեր մեր Սրբազան Վ-
ռաջնորդը իբրեւ իւր նուիրական
պարտքը՝ Ղգ. սոյն պատուոյն ջերմ
պաշտպան մնալով իշխանութեան
հետ բանակցութեան մէջ էր և է.
Խնդրելով ի նմանէ, որ յանցաւորը ո՞րք
և իցէ իւր արժանաւոր պատիժը ըն-
դունի ի պաշտպանութիւն Ղգ.
պատուոյն : Եւ գործը իւր սրտը կեր-
պարանքը ստանալու վրայ էր. երէկ
Վստուածատուր վարդապետը Վա-
հրէէն մասնաւոր հոս իջնելով, իբր
թէ ըստ երկրորդ կտակի տան քանի
մը կահերը Սիրտանութեան թողու-
ցած ըլլալուն պատրուակաւ⁽²⁾, կը

(1) Կուզէիր որ հանգուցեալ վանքի կարասե-
տի հրիտակը ուտող, սննդացնող, անխղճարար մար-
տող, ժողովականաց վաւերականը ունենար :

(2) Եւս երկու անհատներու ստորագրութիւ-
նը թերեւս քու բաժնի ժողովականաց (որ ուրիշ
բան մը չեն գիտեր, և նենգութեանց գործիքն
ըլլալով միշտ բերանդ կը նային ամեն շարժումնե-
րուդ համաձայն յարմարցնել իրենց շարժումը) :
Հարիւր հատեն աւելին արժէքն ունենայ. և այս
ոչ եթէ մեր քով, այլ նոյն ինքն երկրիդ բնակչացը
և օտար ազգաց քով :

(3) Գլուխդ փարատի այդ Սրբազան առաջնոր-
դը, զոր դու միայն կը ճանաչես ամեն ազգայիննե-
րէ զատ :

(4) Եւս մանրագին ադամանդեղէններուն որ
խոհուն անհատ պիտի կարենայ հաւատը ընծա-
յել, զոր յափշտակելու մտքը ամենաբնական
Յակովբեան թագաւորդ պահպանութեան պատրու-
ակաւ կնքել կ'աւանդարես :

(1) Ինչ մեծ ամբարհաւածութիւն Սղէքսան
գրից մէջ երեւելի անմիջներ, Յոյն սրկականք ա-
նուանելու չտի յանգնութիւն :

(2) Բուն կտակը պատրուակ անուանելով պատ-
րուակ եղած կը կարծէք : Եթէ այդպէս է շատ կը

համարձակի Գասարեանց հետ մի անպով բոլոր կերպալ սենեակները բանալ իբր ներկայացուցիչ Միաբանութեան կահ կարասիքն ի գրի առնուել և անմիջապէս ածուրդատուներ (մեղաթ հանէ) փոխադրել, ի մեծ նախատինս Ազգին և Հայութեան :

Ի ի եմք յուսով որ Չեր Արբաղնութիւնը Աստուածատուր վարդապետին այս անօրինաւոր ընթացից ⁽¹⁾ ոչ համամիտ է և ոչ տեղեակ. ինչպէս նաեւ կը ցաւիմք տեսնել, որ նորա այս շարժումը պարզապէս նախատինք պիտի բերէ առանց Չեր գիտութեան :

Աստուածատուր վարդապետի բազմադիմի սուտերէն, անհամեմատ կարկոտկներէն, և մանաւանդ Չեր Արբաղնութեան զրկելու համար պատրաստած սուտումնւտ նամակին դրուածներէն ⁽²⁾ յայտնապէս տեսնու-

սիալիք : Բոլորնից գտնուող քանի մը անատուն, ներ որ չեն հասկնար երբեք ինչեր կը գործէր. և միշտ ձեր այս ին այն բոլոր բռնողատուած են, թերեւս անոնք համարած են զձեզ այդպէս :

(1) Աստուածատուր վարդապետը անօրինաւոր ընթացք մը ունեցած չէ մինչեւ ցայսօր, և այսօր կտակատարի մը ձեր գողութեամբ կերած գոները բանալուն ներկայ գտնուիլն այդչափ անօրինաւոր ընթացք է եղեր : Չեր ազահութեան կերբերէն թելադրուելով բոլորովին անզգամութեան զարկած եպիսկոպոսը, որ սուտ կտակի կնիք կը դրան իւր օտարութեանը մէջ իրրեւ առաջ նորդ, այսպիսի անմ մը Արբաղնութեան կոչելու արարութի մը կ'ըզաս, ամենանեճիկ, պողաճի շահատու երկուքնից իրարու շատ աղէկ յարմարութի ունիք :

(2) Աստուածատուր վարդապետին առ նորին Արբաղնութիւնը գրած նամակէն գուր ինչ տեղեկութիւն կրնայք ունենալ գող և առապակ : Յարձակմամբ չանթայն նամակն հանել և կարգալէզ վերջը երբ տեսար որ սուտ ումուտ գրեւածներ են, չդարձունէիր իրեն ու այնուհետեւ գրելի ինչ որ պիտի գրէիր : Ազգբանագրից գողերուն չ'սպառելուն հաշակը, բոլոր աշխարհ ի զարմանս կրթած է, երբ Ազգբանագրից կառավարութիւնն ընդունի զձեզ պաշտօնի մէջ, հարկաւ գողեր կը զօրանան, ըստ որում գուր ինքնին գողերու պարագրուի էր այդ քաղաքին մէջ : Եկեղեցւոյ փակեալ սենեակի մը մէջ միակ վարդապետի մը փոյս 12 հոգի (ի բաց առեալ զճառար) բիրտով ու

ւեցաւ որ ամենաողորմելի գումարիմը համար կ'ուզէ Չեր կողմանէ պաշտօնան մնալ այնպիսի յափշտակութեանց, որ մարդուս ոսկերքը կը քստմին լրած ժամանակ : Վանդի կրնայ վկայել Չեր Արբաղնութիւնը ևս որ հանգուցեալը իւր մեծակառույց տունը առաջին կտակաւ, զկնի իւր մահուան, Ազգին նուէր ըրած ժամանակ, երկրորդ կտակը որ տղտոտ ձեռքեր համարձակեր են շինելու որուն մէջ հանգուցեւոյն կնիքը միայն կայ ⁽¹⁾, բայց ոչ օրինաւոր վկայութիւն մի և ոչ եկեղեցականի հաստատութիւն մի, ինչ որ գրել չի գիտցող կնկան մի համար պէտք է ըլլալ ըստ առաջնոյն, սոյն երկրորդ կտակին մէջ կրճեմ, տան յիշատակութիւնը ամենեւին չ'ըլլալով, իբր թէ Գասարեան Սիրտիչ ծախու առեր է եղեր զայն, ի բաց թողլով այն աւմէն ծանրագին անգամանդները, որ մահուանէն քիչ օր յառաջ քովը տես, նուաճ էր, և այժմ անոնց հոտը անգամ չի կայ ⁽²⁾ : Այս ամենուն համար կրսեմ, օրինաւոր սեպեր են տան քանի մի կտոր կարասիները երկրորդ կտակաւ միաբանութեան

գանակով կը վաղէք կը յարձակիր : Անգգամութեանց այս վերջին ծայր կատարութեան հանիլը, մտաւորտ կործանումը կը գուշակէ անզգամ, և անիլիզ : Տեսի զամբարիշտն վերացեալ և բարձրացեալ որպէս զմայրան լիբանանու, անցի, և ահա ոչ էր, ինզգրեցի, և ոչ գտաւ տեղի նորա ու Ս. Պատրիարքի Եգիպտոս գտնուած ժամանակ նորա առջեւ ըրած անգգամութիւններդ, լըբութիւններդ, էտեպիկոլութիւններդ, զորս վստմարար ներեցքեղ, կարծեցիր որ այս անգամալ կրննրուի քեզ :

(1) Հանգուցելոյն կնիքն աւելի ինչ կուզէք վաւերական ըլլալու համար, քանի մը անգգամներու գտնելը կը պակսի :

(2) Այս տեսակ կորուստ մը գուր ուր որ երթայ կրնայք ձեր գողը ձեռլ, հիմա որ չեն գտնու և հոտ չեն առնր ոչ եթէ չկան, և հոտ չեն բուրր, այլ արդէն քու համարք են պահուած, փրկուուելու ինչ հարկ կայ :

Թողուլ յուսարով որ խեղճ գումարով մի անոր պաշտպանութիւնը եւս գտնելով դիւրապէս պիտոր յաջողին մարտել հոյակապ չէնք մի և այլն (1)։ Եւ ահա Մոտուածատուր վարդապետ մի որ առաջինը կ'ըլլայ ապերախտ գրու նուող իւր ուխտին և առ ազգն ունեցած հաւատարմութեանը։

Հարկ չէ այս ամենուն ոտուգութիւնը հոս բննել, անշուշտ քննութիւնները և օրինաւորութիւնը ամէն ինչ պիտոր հաստատէ 'ի շինութիւն ամենեցուն ։ Բայց ինչ և որ իրաւամբ կը համարձակի Մոտուածատուր վարդապետը, ինքնագլուխ խառնուիլ և մատ դնել խնդրոյ մի՛ որ երբեք իրեն չը վերաբերիր, երբ դատի ներքեւ է այն, երբ մանաւանդ Չեր Սրբազնութեան տեղեկութիւն չունենալը եւս հաստատուած է (2)։

Եւ որովհետեւ թէ Մեն. Սրբազնութեանդ առ մեզ գրած նա-

(1) Տ. Գառապարեաններուն ինչ մօտաց և նոյա տակի ծառայելն ալ գիտէ ընդհ. Ազգը. ինչպէս որ քու յոտկութիւններդ իսկ գիտէ ։ Տ. Գառապարեաններու հաւատարմութիւնը կառավարութիւնը վկայելն ետքը օտար տերութեանց հիւպատոսարաններն ալ կը վկայեն ։ Եթէ երբեք հասկացող ողորմող փորձաւորութեան դիտութիւնն հարցունենք, պիտի ըսեն որ որչափ Յակովբեանք անդամութեան մէջ նոյնչափ ալ Գառապարեանք հաւատարմութեան մէջ փորձուած են ։

(2) Դ. Սրբազնութիւնը Մոտուածատուր վարդապետը թողած է Եգիպտոս վանուցս դորձակաւարութեան և կալուածապետութեան պաշտօնիւ, վանուցս վերաբերեալ որ և է դորձեռուն կրնայներկայ դանուիլ, առանց ձեղներկայանալու, վասն զի ձեզի հետ հաց չուտելու օրինաւորութիւն մարգարէն սորված է ։ Կոր ամբարտաւան էր աչքը, և ագահ սրտիւ, ընդ նմա և հաց ոչ ուտէի ո ։

Մի լինիք Ըսկիցք անհաւատից. քանզի զինչ հաղորդութիւն է արդարութեան ընդ անօրէնութեան ։ և կամ զինչ հաւատարմութիւն է լուսոյ ընդ խաւարի, և կամ զինչ միաբանութիւն է Քրիստոսի ընդ բնիկարայ, կամ զինչ բաժին կայ հաւատացելոյն ընդ անհաւատին. կամ զինչ նմանութիւն է տաճարի Մոտուածոյ մեհենայ, . . . վասն որոյ ելէք 'ի միջոյ նոցա, և մեկնեցարուք ասէ տէր, և 'ի պիղծս մի մերձենայք ո ։

մտններով, և թէ Գեր. Սիմէօն և պիսկոպոսին կրկնակի յանձնարարութիւններով, յիշեալ վարդապետը առանց մեր գիտակցութեան չի պիտի միջամտէ իրեն չի վերաբերելիք խնդրոյ ինչպէս և բազմիցս միաբանութեանդ օգտակար եղած միջոցները յուլուցած էինք իրեն. վասն որոյ կը պարտաւորինք նորա այս ապօրինաւոր ընթացքը եւս ծանօթացնել ձեր Սրբազնութեան, յուսարով որ ձեր հեռատեսութիւնն եւս պիտոր փութայ զառաջն առնուլ այս անկարգութեանց, քանի որ ձեր Սրբազնութեան եւս անձանօթ չէ անոր ոչ գովելի ընթացքը որ պարզապէս միաբանութեան բարի համբաւոյն ամօթն ու նախատինքն պիտոր լինի. 'ի մեծ ցաւ սրտի ձերդ Սրբազնութեան ու ամենայն ճշմարիտ աղգասիրաց ։

Որ և խորին յարգանքք համբարելով զաջ ամենապատիւ սրբազնութեանդ միտմ' ծառայ ։

Նորին վեմո-վեան Նոյապար Փաշային
Իրանորդ Թ. Յակովբեանց ։
Մեհապապի- Տ. Տ. Եսայի Սրբազն
արք. Եպիսկոպոս և Պապիարքս սրբոյ
Յակովբեանց վանոց ։ յԱրհասաղէ՛՛

Հասարակաց կարծեաց ատենին կը թողումք գատել և իմաստասիրել. ինչ ըսել է կրակ մը որ կտակողին ոչ ստորագրութիւնն ունի, և ոչ կնիքը. բայց միայն կտակակատարներուն կրնք քովը վաւերացած ։

Եւ հանգուցելոյն ինչքերը գրի առնուած ժամանակնոյն ինքն հանգուցելոյն ինքնագիր կտակը անուակէն ելէ բուն իւր ստորագրութեամբն ու կնքովը վաւերացած, և իրեն կը տակակատար որոշած հաւատարիմ անձ մը Գառապարեան Սեծ. Յակովբեան, և ոչ ինքնակող խումբ մը ընչաքաղններ ։

Յ Լ Ն Կ

Յ ՈՒՆԻՍ

Պատասխանիք և լուծումն խաբէութեանց հիմնական տարրերութեանց Վաթուղիկէ և Լջմիածնական դաւանութեանց .	121—128
Կիպրոսի Լէկէղեցւոյ և վանուց հաշուեցուցակը .	128—130
Յիսուսեան կրօնաւորին նամակը .	130—136
Սոհ արձան Փարիս հանրմի .	136—139
Լճդ . Լգիպտոսի Լռաջնորդական խնդիր .	139—141
Գահիրէէն եկած նամակներ .	141—144

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՔ

- Ա. Սիօնը ամսէ ամիս կը հրատարակուի 24 երեսէ բաղկացեալ մէկուկէս ութածալ թղթով .
- Բ. Տարեկան գինն է երկու արծաթ Մեծիտիյէ հանդերձ ճանապարհի ծախքովը կանխիկ վճարել .
- Գ. Զատ տետրակ առնել ուղղը , պէտք է ամեն մէկ տետրին չորս դա. հեկան վճարել .